

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ PROSOPOGRAPHY ПРОСОПОГРАФИЯ

ԱՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ*

DOI:10.57155/HHER1503

ՊԵՏՐՈՍ ՄԱԴԱԹՅԱՆԸ (ԱԾՈՒՂ ՍԵՅԱԴ) ԵՎ ԱՄԱՂՈՒԻ ՆՈՐԱՎԱՆՔԻ ՎԻՄԱԳՐԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ

Բանալի բառեր՝ Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանց, Հովհաննես Բաբայան, Քաջբերունի, Սմբատի դամբարան, «Ճոռաքաղ» հանդես, Նախ-իջևանի գավառապետ, Երևանի նահանգ, ձեռ. ՄՄ 3751, աթա-բակ Տարսայիճ Օրբելյան:

19-րդ դարակեսի նշանավոր աշուղ և բանաստեղծ Պետրոս Մադաթյանը նաև հասարակական, պետական-քաղաքացիական բեղուն գործունեություն է ծավալել: Աշուղը ծնվել է Շամախիում, սերում է Արցախի Ավետարանոցի Մադաթյանների ազնվական տոհմից. ազնվական ծագումը և բեկական տիտղոսը նրան հնարավորություն են տվել Ռուսական կայսրության պետական ծառայության անցնելու և վերջինիս շնորհիվ իր կյանքի մի կարևոր ժամանակահատվածում լինելու նաև Արևելյան Հայաստանում, ի մասնավոր՝ Երևանի նահանգում: 1852 թ. հուլիս ամսին այդ ժամանակ դեռևս Կովկասի փոխարքայության խորհրդի նախագահ իշխան Բարսեղ Բեհբուջյանի՝ միջնորդությամբ երկարատև դադարից հետո ծառայության է անցնում Վայոց ձորում (Դարալագյազ)

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ավագ գիտաշխատող, ք. գ. ք., a.aniarakelyan@gmail.com, հոդվածը ստանալու օրը՝ 18 մարտի, 2025, հոդվածը գրախոսելու օրը՝ 15 մայիսի, 2025:

¹ Կենսագրական տեղեկություններ տե՛ս Большая российская энциклопедия 2004-2017, Россия [2004], «Бёбутов Василий Осипович», համացանցային հղումը՝ https://old.bigenc.ru/domestic_history/text/1858299 (17.03.2025):

որպես «նաչալին»՝ գավառակապետ (տեղամասի պետ²): Կարճ ժամանակ՝ մոտ մեկ ամիս, այնտեղ մնալուց հետո Երևանի նահանգապետ գեներալ-մայոր Իվան Նազարովի նշանակմամբ տեղափոխվում է ծառայության այլ վայր: 1853 թ. երկրորդ կեսին՝ Արևելյան պատերազմի պաշտոնապես սկսվելուց մի փոքր առաջ, հատուկ հանձնարարությամբ, Պ. Մադաթյանը մի քանի ամսով Վայոց ձոր ծառայության է վերադառնում: Այստեղից տեղափոխվում է Շիրակ՝ 1853 թ. նոյեմբերի 19-ից՝ Բաշադրիկլարի նշանավոր ճակատամարտից հետո: Ծառայության և ծառայողական ոչ սեփական մեղքով առաջացած խնդիրների բերումով այս շարունակական տեղափոխությունները առիթ են դառնում, որ 1857 թ. սկզբներից մինչև 1858 թ. կեսերը Պ. Մադաթյանը արդեն երրորդ անգամ վերադառնա Վայոց ձոր՝ նույն՝ տեղամասի պետի պաշտոնով³: Պետական ծառայության բերումով այս երեք այցելությունների ընթացքում հասցնում է ամենայն մանրամասնությամբ ծանոթանալ ոչ միայն տեղանքին, այլև տեղի պատմամշակութային հուշարձաններին: Պ. Մադաթյանը բավական կիրթ և գրագետ էր, կարողացածի չափով իր գիտելիքները ծառայեցնում էր գրական-հասարակական առավել լայն շահերի: Դրանցից մեկը դառնում է նաև Սարգիս արքեպս Զալալյանցի հանձնարարությամբ և նրա հետ համաձայնությամբ՝ Վայոց ձորի պատմական հուշարձանների ու վիմագրերի արձանագրումը և նկարագրությունը: Պ. Մադաթյանը պետական ծառայությանը զուգահեռ և նաև այդ ծառայության շնորհիվ կարողանում է կազմակերպել Վայոց ձորի հնությունների նկարագրության աշխատանքը, որը նրա իսկ անմիջական ղեկավարմամբ մեծ մասամբ իրականացնում են նրա հոգեորդի Հովհաննես Բաբայանը և վայոցձորցի քահանաներ տեր Ավագ Աբրահամյանը և տեր Առաքել Տեր-Աստվածատուրյանը: Իսկ աշուղը մասնավորապես Ամաղուի նորավանքի աշխատանքներին նպաստում է իր գիտելիքներով: Մասնակցելով Սմբատի դամբարանի⁴ հայտնաբերմանը՝ դառնում է նաև այդ տապանագրերի առաջին ընթերցողը: Այսպես նպաստում է վերջինիս հանրայնացմանը գրական և Երևանի նահանգի ու Կովկասի փոխար-

² Ի պաշտոնե ոստիկանական ծառայող էր, հիմնականում զբաղվում էր հասարակական կարգի պահպանությամբ:

³ Պետրոս Մադաթյանի կենսագրությունը՝ լիակատար հղումներով, արտացոլվելու է աշուղի կյանքին, գործունեությանը և ստեղծագործությանը նվիրված ուսումնասիրության մեջ, որից էլ փաղված են այս տեղեկությունները:

⁴ Նորավանքի Սուրբ Գրիգոր եկեղեցի և «տուն տապանի», որ 1275 թ. կառուցել է Սյունյաց Տառսայի Թրեկյանը և այնտեղ տեղափոխել իր 1273 թ. մահացած ավագ եղբայր Սմբատ իշխանաց իշխան Թրեկյանի աճյունը: Սա նաև Թրեկյանների տոհմական տապանատունն է: Մանրամասն տե՛ս, օրինակ, **Քաջբերունի**, «Համապարհորդական նկատողություն», Արա-րատ, 1889, ժԲ, էջ 657-658:

քայություն վարչական շրջանակներում: Պ. Մաղաթյանի վայոցձորյան գործունեության այս դրվագին լույս են սփռում ինչպես անտիպ ձեռագրական և արխիվային փաստաթղթերը, այնպես և դրա առնչությամբ տպագրված և հետագայում գիտական լայն շրջանառության մեջ չմտած հրապարակումը⁵:

**Պետրոս Մաղաթյան և Սարգիս արհեսպ Ջալալյանց.
«Տարընթերցումներ» և բանավեճեր**

Պ. Մաղաթյանի վայոցձորյան ծառայության երրորդ փուլը՝ 1857-1858 թթ., համընկնում է այն ժամանակամիջոցին, երբ Ս. արքեպս Ջալալյանցը, որն այդ ժամանակ Վրաստանի և Իմերեթիայի թեմի նորահաստատ առաջնորդն էր⁶, սկսել էր իր «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» գրքի երկրորդ հատորի աշխատանքները⁷: 1857 թ. ամռանը ավարտելով Գավառ (Նոր Բայազետ) իր այցը՝ թեմակալը ուղևորվում է Վայոց ձոր և, Վայոց ձոր չմտած, Այրիջա ամառանոցում⁸ հանդիպում է իր խոսքով. «....Ձցանկալի բարեկամն իմ զհայրենասէր և զազգասէր Կապիտան Ռուսաց Կայսերութեան զՊետրոսն Մատաթեանց Սեյադ մականունեալ և զորդի նորա զառոյգ և զկայտառ պատանին Յովհաննէս և զերկուս գովութեանց արժանաւոր քահանայս զտէր Աւագն Աբրահամեան, և զտէր Առաքելն տէր Աստուածատուրեան», որոնք նրան օգնում են վայոցձորյան աշխատանքի հարցում. «....Որք անխոնջ աշխատասիրութեամբ մատնանիշ և առաջնորդ այսր ճանապարհորդութեան մերոյ հանդիսացան գրաւոր աշխատութեամբ, սկսեալ յԱրկազեան գեղջէ ի բոլոր Վայոցձոր»⁹: Թեև թեմակալը որևէ ծանուցում չի տալիս, սակայն վայոցձորյան այս աշխատանքը ամռան և աշնան¹⁰ ամիսներին կատարում են Պ. Մաղաթյանը և իրեն գործակցողները՝ առանց թեմակալի: Կատարված ամբողջ աշխատանքը՝ հնուիթյունների արձանագրմամբ և վիճագրերի ընթերցումներով, Պ. Մաղաթյանը 1857 թ. հոկտեմբերի 22-ին

⁵ Սույն հոդվածի վերջում դրված է «Հավելված»՝ մեկից երեք համարակալումներով: Այստեղից հղումներ կարվեն Հավելված, կողմին՝ համապատասխան համարը ձևով:

⁶ Ղեկավարել է 1857-1863 թթ., առաջնորդանիստը՝ Թիֆլիս: Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, 2002, Երևան, էջ 869, «Ջալալյան Սարգիս»:

⁷ Առաջինը հրատարակել էր 1842 թ. Տփլիսում:

⁸ Այրիջա Մեծ – Գեղարքունիքի Մարտունիում, Մարտունի-Եղեգնաձոր համապարհի վրա:

⁹ Ս. արհեսպ Ջալալյանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Տփլիս, 1858, էջ 131:

¹⁰ Այն, որ հանդիպումը և պայմանավորվածությունը եղել են ամռանը, բոլորն են վկայում: Տե՛ս նույն տեղում, էջ 130-131: Պ. Մաղաթյանը զեկուցագրում է գրում այդ մասին. «....Թիֆլիսի հայոց թեմակալ արհեսպիսկոպոս Սարգիս Ջալալյանցը այս տարվա (1857 – Ա. Ա.) ամռանը Նոր-Բայազետի Ագրիջ (Այրիջա) գյուղում էր գտնվում....» (ընդգծումն իմն է՝ Ա. Ա.): Հավելված 2: Իսկ Հ. Բաբայանը՝ «Մշակում». Թիֆլիս, 1873, № 13, ապրիլի 5, էջ 2, «Նամակ Ալեքսանդրապոլից»:

ուղարկում է թեմակալին, որն էլ այն զետեղում է «Ճանապարհորդութիւն....» գրքի երկրորդ հատորի՝ Վայոց ձորին նվիրված բաժնում:

Դեռևս իր կենդանության օրոք բանաստեղծը և՛ իր գրական համախոհներ Գևորգ Ախվերդյանին ու Ոսկան Հովհաննիսյանց երևանցուն ուղղված մասնավոր նամակներում, և՛ պաշտոնական զեկուցագրերում, և՛ այդ գործի առնչությամբ «Ճոռքաղ» հանդեսում 1860 թ. հրատարակած նյութում¹¹ ամենայն մանրամասնությամբ բացատրում է գործի եղելությունը, գործող անձանց և իր մասնակցությունը՝ թեև այն կապելով միայն Սմբատի դամբարանի հայտնաբերման հետ:

Ապա՝ Սեյադի մահվանից (1872 թ. մայիսի 1) բավական կարճ ժամանակ անց այս՝ Վայոց ձորի հնությունների նկարագրության և վիմագրերի ընթերցման հեղինակության շուրջ բավական մեծ վեճ է ծավալվում «Մշակ» և «Մեղու Հայաստանի» պարբերականների միջև¹²: 1873 թ. սկզբին «Մշակ» հանդեսում

¹¹ ՄՄ 3751, 342ա, 343բ (Գևորգ Ախվերդյանին ուղղած նամակը): Հավելված 2 (Նախիջևանի գավառապետին ուղարկած զեկուցագիրը): **Պետրոս Մաղաթեան**, «Գերեզմանք անդամոց տանն մեծի իշխանացն Օրբելեանց (Ի նամակէ որ առ Պ. Ո. Յ.)», *Ճոռքաղ*, Մոսկուա, 1860, ե, էջ 83-84 (նույնը՝ Ոսկան Հովհաննիսյանցին ուղարկած նամակը):

¹² *Մշակ*, Թիֆլիս, 1873, 2, **յունվարի 18**, էջ 4, «Խառն լուրեր: Նոր լուր, հին գործերից»:

Մեղու Հայաստանի, Թիֆլիս, 1873, № 6, շաբաթ, **17 փետրվարի**, էջ 2-3: Շուշիից Զ. Գրիգորյանի առաջին պատասխանն է այս հարցի առթիվ, որով խնդրում է «Մշակի» խմբագրից «յայտնելու այս պարոնի իսկական անունը, որ ինքն էլ կարող լինի իսր ասելիքը ասել»: *Մշակ*, Թիֆլիս, 1873, №13, **ապրիլի 5**, էջ 2, «Նամակ Ալեքսանդրապոլից»: Հ. Բաբայանի ընդարձակ պարզաբանումն է, այդ թվում՝ իր կատարած աշխատանքի մասին: «Յովհաննէս Բաբայեանց, 10 մարտի 1873» (նամակը ուղարկելու օրը):

Մեղու Հայաստանի, Թիֆլիս, 1873, № 15, շաբաթ, **28 ապրիլի**, ժՁ. տարի, էջ 3, սյուն. 1-2, «Պատասխան»: Խմբագրական. ծանուցում այն մասին, որ «Մշակում» Հ. Բաբայանը պատասխանել է, ապա՝ հորդոր Զ. Գրիգորյանին՝ անպատասխան չթողնելու:

Մեղու Հայաստանի, Թիֆլիս, 1873, № 17, շաբաթ, **12 մայիսի**, ժՁ. տարի, էջ 1-2, «Ազգային: Յարգոյ խմբագիր»: Զ. Գրիգորյանի հակադարձումը Հ. Բաբայանին:

Մեղու Հայաստանի, Թիֆլիս, 1873, № 19, շաբաթ, **26 մայիսի**, ժՁ. տարի, էջ 2, «Ազգային: Յարգոյ խմբագիր»: Ալեքսանդրապոլից Վահագն Կոպալ անունով թղթակցի հակադարձումն է Հ. Բաբայանին՝ ի պաշտպանություն Պ. Մաղաթյանի:

Մշակ, Թիֆլիս, 1873, № 21, **յունիսի 7**, էջ 2, սյուն. 2-4, «Նամակ Դուբայից»: Հակոբ Կարապետյանցի պատասխանն է ի պաշտպանություն Հ. Բաբայանի, նաև Պ. Մաղաթյանի մասին առ այն, որ հենց վերջինս է բացել դամբարանը և նկարագրել այն:

Մշակ, Թիֆլիս, 1873, № 26, **յուլիսի 12**, էջ 4, սյուն. 1: Ծանուցում այն մասին, որ Հ. Բաբայանից խմբագրությունը նոր նամակ է ստացել ընդդեմ «Մեղու....ի» հոդվածների: Սակայն թե՛ Հ. Բաբայանի, թե՛ Հակոբ Կարապետյանցի նախորդ հոդվածները եղելությունը բացահայտում են: Սակայն եթե «Մեղու....ն» դարձյալ գրի այդ մասին, իրենք կհրատարակեն Հ. Բաբայանի նոր հոդվածը:

մի կարճ, բայց ամպրոպի ազդեցությամբ լուր է տպվում. «Մենք լսում ենք որ Սրբ. Ս... արք-եպիսկոպոս Ջ...նի ճանապարհորդության երկրորդ հատորի... վերաբերեալ բոլոր նկարագրութիւնները, որ պարունակում է համարեա գրքի ութերորդ մասը, — ուրիշ մի պարոնի աշխատութիւն է, որ սրբազանի անունով տպված է և ասում են, իբր թէ այն պարոնի ազգանունան գլխատառերն են Յ. Բ. Իրաւ է արդեօք...»¹³: Փոխադարձ մեղադրանքների և բանավեճի առանցքում հայտնվում է երկու անուն՝ Ս. արքեպս Ջալալյանց և Հ. Բաբայան՝ Պ. Մաղաթյանի հոգեորդին: Այս խնդրին և վեճին բավական ընդարձակ անդրադառնում է Քաջբերունին «Փորձ» հանդեսում փորձելով Պ. Մաղաթյանի անձնական թղթերի և պաշտոնական գրությունների հիման վրա պարզել, թե ի վերջո ո՛ւմ հեղինակությամբ է Վայոց ձորին նվիրված հատվածը հրատարակվել («Ճանապարհորդութիւն...» գրքում. Ս. Ջալալյանցի՞, Պ. Մաղաթյանի՞, Հ. Բաբայանի՞, թե՞ հիշատակված քահանաների¹⁴: Համադրելով որոշ պաշտոնական (Պ. Մաղաթյանի անձնական թղթեր) և ոչ պաշտոնական տեղեկություններ՝ Քաջբերունին պնդում է, որ աշխատանքը, ի վերջո, թեմակալը չի կատարել, իսկ վիմագրերի ընթերցումը վերապահում է տեր Ավագ տիրացու Աբրահամյանին¹⁵: Հ. Բաբայանը, ըստ նրա, լոկ գրել և «կարգի է դրել» ընթերցումները¹⁶: Սակայն Քաջբերունին բավական բարձր է գնահատում Պ. Մաղաթյանի կազմակերպչական և առաջնորդական դերը. «Դարալագեագի հնութիւնների արձանագրութիւնները, որ այժմ տպուած են Ջալալեանի գրքի մէջ, թէև ժողովուած են, արդարև, ժէ նամակիս մէջ յիշած երեք անձանց աշխատութեամբ, բայց գլխաւոր շարժառիթը և քաջ ղեկավարը և յաջող միջոցները տուողը այնու ամենայնիւ եղել է Մաղաթեանը: Աւելի ասեմ, եթէ նա չի՞նէր, գուցէ թէ Դարալագեագի արձանագրութիւնները մնային անմատչելի մինչև մեր օրերը, որ շատ բան արդէն մաշուել է, կոտրտվել է և անհետացել»¹⁷:

¹³ Մշակ, 1873, № 2, էջ 4:

¹⁴ Մանրամասն տե՛ս Քաջբերունի, Ճանապարհորդական նկատողութիւնք, «Փորձ» ազգային եւ գրականական եռամսեայ հանդէս, Երկրորդ տարի, № 4, Տպիխս, 1877-1878, էջ 323-325:

¹⁵ Քաջբերունու համապարհորդության տարում այս բանաձևն, որ ապրելիս է եղել Մալիշկայում, արդեն մահացած էր: Տե՛ս նույն տեղում, էջ 324:

¹⁶ Իսկ տեր Առաքել Տեր-Աստվածատուրյանը (Քաջբերունու համապարհորդության տարում դեռ ողջ է եղել և ապրել է Մալիշկայում), միայն երբեմն պատմական փաստեր և տեղեկություններ է հաղորդել, բայց հիմնականում եղել է ազատ ունկնդիր. «Այս հանգամանքը ամբողջ Դարալագեագում յայտնի է», նույն տեղում, էջ 325:

¹⁷ Նույն տեղում, էջ 347:

«Մշակ» — «Մեղու....»-ական այս բանավեճերի¹⁸ փոխադարձ մեղադրանքների մեջ խնդրիս տեսանկյունից ուշագրավ է այն ամենը, ինչ կապված է Պ. Մադաթյանի անվանը: Հ. Բաբայանի՝ «Մշակում» հրատարակած պաշտպանական նյութը «Մեղու....ի» շրջանակում այլ անձանց ևս միացնում է այս բանավեճին: Մասնավորապես Ալեքսանդրապոլից Վահագն Կոպալ ծածկանունով թղթակիցներից մեկը, որ ծանոթ է լինում Պ. Մադաթյանի մտերիմներից մեկին, շտապում է հակաճառել՝ ասելով, որ այդ աշխատությունը ո՛չ Հ. Բաբայանին է, ո՛չ էլ Ս. Զալալյանցին, այլ՝ Պ. Մադաթյանին: Թեև և՛ անձնական նամակներում, և՛ պաշտոնական գեկուցագրերում Պ. Մադաթյանն անընդհատ շեշտում է, որ այդ ամբողջ աշխատանքը ինքը չի կատարել, սակայն, ըստ իր վերոնշյալ ընկերոջ պատմածի, բանաստեղծը իր հոգեորդու մեջ ուսման հանդեպ սեր առաջացնելու նպատակով նրա անունով որոշ նյութեր է հրատարակել, ինչն էլ ոգևորել է երիտասարդին, և նա սկսել է աշխատել: Գուցե Պ. Մադաթյանի՝ իր հոգեորդուն այսկերպ ոգևորելն է պատճառը, որ նրան դամբարանի հայտնաբերման գործում առաջնային տեղ է հատկացրել: Սակայն իրականում և՛ Գ. Ախվերդյանին, և՛ Ո. Հովհաննիսյանցին ուղարկած նամակը, որից և հրատարակվել է «Ճռաքաղում», հնարավորություն են տալիս այլ տեսանկյունից նայելու հարցին:

Պ. Մադաթյանի գրությունները այս հարցի շուրջ վերաբերում են ոչ թե ամբողջին, այլ Ամաղուի նորավանքում Սմբատ իշխանաց իշխան Օրբելյանի դամբարանը և տապանագրերը հայտնաբերելուն: Այս հարցին առանձնակի ուշագրություն բեռնելուս պատճառը նաև այն էր, որ նախ ՄՄ 3751-ում պահպանված են Պ. Մադաթյանի իսկ ձեռքով գրված և Գ. Ախվերդյանին ուղարկած տապանագրերը¹⁹, ապա՝ նույն այս տապանագրերի՝ 1860 թ. «Ճռաքաղ» հանդեսում հրատարակությունը²⁰: Եվ վերջիններս հստակորեն տարբերվում են Ս. Զալալյանցի հրատարակածից և եղած էական տարբերությունների հիմամբ այլ ընթերցումներ են:

¹⁸ Այստեղ «Մեղու....ի» հիմնական պատասխանողը Զ. Գրիգորյանն է Շուշիից: Քաջբերունին էլ առանձնակի շեշտում է թեմակալի լուսթյունը այս «միմյանց շանթող» բանավեճում, տե՛ս նույն տեղում, էջ 323: Զ. Գրիգորյանը «Նշմարիտ եղելությունը» պատմելիս գրում է. «....Ինչպես որ ստուգիս տեղեկացայ» (Մեղու Հայաստանի, 1873, № 17, էջ 1, սյուն. 4): Ենթադրաբար Զ. Գրիգորյանի տեղեկությունների «ստույգ» աղբյուրը եղել է նույն իմը սրբազանը, որ 1873 թ. արդեն իսկ գտնվում էր Շուշիում (1865-1876 թթ. եղել է Ղարաբաղի թեմի առաջնորդը, առաջնորդանիստը՝ Շուշի: Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 869):

¹⁹ Հավելված 3:

²⁰ Ճռաքաղ, 1860, Ե, էջ 83-84:

Արդ, որտեղի՞ց կարող էր առաջանալ այդ տարբերությունը, եթե Պ. Մաղաթյանն առհասարակ ընթերցման և նկարագրության հարցում որևէ դերակատարում չունենար²¹: Մինչդեռ Հ. Բաբայանը «Մշակի» իր պարզաբանման մեջ հստակեցնում է աշխատանքի այն սահմանը, որ կատարել է ինքը, և որը հավելել է Ս. Ջալալյանցը: Եվ նա ոչինչ չի ասում այն մասին, թե տապանագրերի կամ այլ վիճագրերի ընթերցման տարբերություններ կան: Ավելին, պնդում է, որ մնացածը բառ առ բառ համապատասխանում է իր նկարագրություններին²², որոնք ուղարկվել են թեմակալին: Հետևաբար Ս. Ջալալյանցի գրքում հրատարակված՝ տապանագրերի ընթերցումները կա՛մ Հ. Բաբայանին են, կա՛մ, ինչպես Քաջբերունին է պնդում, տեր Ավագ քահանային: Այնուհանդերձ, այս ամբողջ բանավեճի ընթացքում հարցը, թե Ս. Ջալալյանցը ի՛նչ ծավալի աշխատանք է արել, մնում է առկա՞²³: Սակայն հստակ է, որ թեմակալը ինչ աշխատանք էլ կատարած լինի, դա չէր կարող վիճագրերի նոր ընթերցում կամ եղածի վերստուգում լինել, քանզի փաստ չկա, որ նա Վայոց ձոր վերադարձած և նորից ընթերցած լինի: Բացի դրանից՝ «մեղուականները» թեմակալի, այսպես ասած, դատը պաշտպանելիս, նույնիսկ նման խնդիր չեն դնում: Եվ, ըստ պ. Զ. Գրիգորյանի «ստույգ» տեղեկությունների, սրբազանը 1857 թ. ամռանը, երբ կես ճանապարհից վերադարձել է իր նստավայր Թիֆլիս, այլևս հետ չի եկել Վայոց ձոր²⁴: Սակայն այն փաստը, որ սրբազանի ոչ մի պաշտպան չի պնդում, թե նա կարող էր ընթերցած լինել վիճագրերը, ևս մեկ ապացույց է, որ իր գրքում հենց բաբայանական ընթերցումներն են²⁵: Ինչպես նշեցի, Հ. Բաբայանը տապանագրերի և վիճագրերի

²¹ Ինչպես նշեցի, Քաջբերունին բարձր է գնահատում Պ. Մաղաթյանի առաջնորդական դերը, սակայն նա «Ճոռախղի» այս տպագրյալ նյութը չի օգտագործել, այս ընթերցումների համեմատություն չի արել, հետևաբար նաև եզրահանգում չէր կարող անել այս առիթով:

²² Մշակ, 1873, № 13, էջ 2:

²³ Հ. Բաբայանի մանրամասն բացատրությունը ևս այս հարցը չի սպառում: Սա հստակորեն կպարզաբանվի միայն այն դեպքում, երբ ունենանք այն ձեռագիր բնօրինակը, որ Պ. Մաղաթյանը 1857 թ. հոկտեմբերի 22-ին ուղարկել է Ս. Ջալալյանցին:

²⁴ Սակայն Վայոց ձորի բոլոր այդ հնությունները սրբազանը տեսել է դեռևս 1830 թ. սարկավագության տարիներին Յանի անունով մի հույն ճարտարապետի հետ այնտեղ այցելության ժամանակ: Տե՛ս Մեղու Հայաստանի, 1873, № 17, էջ 1, սյուն. 4: Քաջբերունու պնդումը (տե՛ս Փորձ, 1877-1878, № 4, էջ 325), թե սրբազանը առանց Վայոց ձոր մտնելու է գրում, որ տեսել է Հոդոցիմը (տե՛ս **Ջալալեանց, Ճանապարհորդություն...**, էջ 202-204), այնքան էլ գուցե արդարացի չէ: Ըստ ամենայնի, սրբազանն իր վաղեմի հիշողություններն է արտացոլել, ուրեմն չի ստել:

²⁵ Ս. Ջալալյանցը կարող էր որոշ սրբագրումներ արած լինել՝ հիմնվելով Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն նահանգին Սիսական» երկի վրա: Սակայն նա ամբողջովին չէր կարող փոխել այդ ընթերցումները:

ընթերցումների որևէ տարբերություն չի տեսնում և չունի առարկություն, հետևաբար ճոճաբաղյան տարբերակները այլ ակունք ունեն:

ՀԱԱ-ում պահպանվում է մի գործ՝ կապված Սմբատի դամբարանի հայտնաբերման հետ²⁶, որը նաև լույս է սփռում տապանագրերի առաջին ընթերցման հարցի վրա: Այսպես՝ 1857 թ. սեպտեմբերի 15-ին Պ. Մադաթյանի առաջնորդությամբ նրա հոգեորդին և երկու քահանաները հայտնաբերում են Օրբելյան տան Սմբատ իշխանաց իշխանի դամբարանը, ինչը, ըստ եղած փաստերի, այդ խմբի համար նորություն է լինում: Այս առիթով Պ. Մադաթյանը 1857 թ. հոկտեմբերի 7-ին շտապում է Նախիջևանի գավառային վարչությանը տեղյակ պահել, որ, Ս. արքեպս Զալալյանցի հանձնարարությամբ, Վայոց ձորի հնությունները արձանագրելու ժամանակ իրենց հաջողվել է հայտնաբերել նաև Սմբատ արքայի դամբարանը: Ապա Նախիջևանի գավառապետ²⁷ [Բ. Ի. Վոնսովսկին] ինքն էլ 1857 թ. հոկտեմբերի 16-ի գրությամբ շտապում է տեղեկացնել նահանգային վարչությանը, որ նույն թվականի հոկտեմբերի 7-ին Դարալագյազի տեղամասի պետը [Պետրոս Մադաթյան] իրեն գեկուցել է Հայոց Սմբատ թագավորի և նրա ընտանիքի անդամների դամբարանը գտնելու մասին²⁸: Ապա Նախիջևանի գավառապետին նահանգային վարչությունից հոկտեմբերի 21-ով պատասխան նամակ է գալիս, որով Երևանի նահանգապետ գեներալ-մայոր Իվան Նազարովի անունից

²⁶ Գործը վերագրված է. «По рапорту управляющего Нахичеванским уездом, об открытии при монастыре Нораванк могилы Армянского царя Сумбата и членов дома его, царствовавших в 13-м столетии» (Համաձայն Նախիջևանի գավառապետի գեկույցի՝ 13-րդ դարում թագավորած՝ Հայոց Սմբատ թագավորի և նրա ընտանիքի անդամների գերեզմանները Նորավանքում հայտնաբերելու մասին): ՀԱԱ, ֆոնդ 94, ցուցակ 7, գործ 24, 18 октября 1857 года – 29 ноября 1857 года, 7 лист:

²⁷ Թեև անունը նշված չէ, սակայն Նախիջևանի այդ ժամանակվա գավառապետը, ըստ ամենայնի, եղել է տիտուլյար խորհրդական (ֆաղաֆաղական 9-րդ դասային աստիճան) Բոնիբայով Իվանովիչ Վոնսովսկին: Տե՛ս *Кавказский календарь на 1858 год*, Тифлиς, 1857, с. 432 (տեղական վարչությունների հաստիքացուցակը 1858 թ. համար ներկայացված է ըստ 1857 թ. նոյեմբերի 1-ին ստացված տեղեկությունների: Տե՛ս *Кавказский календарь на 1858 год*, Тифлиς, 1857, с. 424, примечание).

²⁸ ՀԱԱ, ֆոնդ 94, ցուցակ 7, գործ 24, էջ 1, «Начальник Даралагезского участка от 7-го Октября за № 1599 доносит, что по распоряжению Тифлисскаго Епархиальнаго Начальника Высокопреосвященнаго Архиепископа Саркиса Джалалова, Даралагезского участка в сел. Амагу при тамошнем монастыре Нораванке открыты могилы Армянского царя Сумбата и членов дома его, царствовавшего в тринадцатом столетии. № 4054, 16 октября 1857 г.» (Դարալագյազի տեղամասի պետը հոկտեմբերի 7-ի № 1599 [գրությամբ] գեկուցել է ինձ, որ, Թիֆլիսի թեմակալ բարձրագույնություն Սարգիս արքեպիսկոպոս Զալալյանցի հանձնարարությամբ, Դարալագյազի տեղամասի Ամադու գյուղում տեղի Նորավանքի մոտ, հայտնաբերվել (բացվել) են 13-րդ դ. թագավորած Հայոց Սմբատ թագավորի և նրա ընտանիքի անդամների գերեզմանները: № 4054, հոկտեմբերի 16, 1857 թ.):

լրացուցիչ տեղեկություններ են պահանջում այս գործի առնչությամբ²⁹: 1857 թ. նոյեմբերի 10-ին եղեգնաձորից³⁰ (Քեշիշքենդ) Պ. Մաղաթյանը ընդարձակ գեկուցագիր³¹ է գրում և մանրամասնում գործի նախապատմությունը, ընթացքը, ուղարկում է այն Նախիջևանի գավառապետին՝ միաժամանակ հիմնավորելով այն հանգամանքները, որոնց շնորհիվ իրենք կարողացել են գտնել սրանք: Ապա այս գեկուցագիրը նույնությամբ Երևանի նահանգային վարչությունից ուղարկվել է Թիֆլիս՝ փոխարքայության գրասենյակ³²: Բոլոր փաստաթղթերից միայն այս գեկուցագրում է, որ Պ. Մաղաթյանը ընդարձակ և մանրամասնորեն շարադրում է գործի հանգամանքները, և այն հարցի ամենաստույգ պարզաբանումն է:

Ապա, մինչև թեմակալին ամբողջ Վայոց ձորի մասին նյութը հոկտեմբերի 22-ին ուղարկելը, նա 1857 թ. սեպտեմբերի 30-ի № 1544 ուսուերեն պաշտոնական նամակով նախ շտապել է հայտնել թեմակալին դամբարանի և տապանա-

²⁹ Երևանի նահանգային վարչությունը արեպիսկոպոսի ձեռնարկի վերաբերյալ պետք է որ ամեն ինչ իմանա, քանի որ արեպիսկոպոսը նախ պետք է թույլտվություն ստանա քեմից դուրս գալու, ապա Երևանի նահանգային թույլտվությունը ունենա՝ Երևանի նահանգում շրջելու և տեղի հնությունները ուսումնասիրել-արձանագրելու: Այն, որ թեմակալի այս այցելությունների նպատակը իրոք եղել է Երևանի նահանգի կամ գուցե Վայոց ձորի հնությունների արձանագրություն-նկարագրությունը, վկայում է նաև Պ. Մաղաթյանը պաշտոնական գեկուցագրելով: Սակայն նահանգային վարչության պահանջագրերը եղել են ոչ թե հենց այդ նախաձեռնության, այլ բուն դամբարանի և տապանագրերի հայտնաբերման առնչությամբ: Պ. Մաղաթյանն ինքն էլ գավառային վարչություն իր առաջին ծանուցման մեջ չի անդրադարձել առհասարակ Վայոց ձորի հնություններին և դրանց նկարագրություններին, այլ միայն դամբարանի հայտնաբերմանը:

³⁰ Եղեգնաձորում է գտնվել ոստիկանական գրասենյակը, որտեղից և աշխատել է Պ. Մաղաթյանը: Տե՛ս Արարատ, 1889, Ա., **Քաջբերունի**, *Ճանապարհորդական նկատողությունք*, էջ 43: Ինչպես նաև եղել է գավառի կառավարիչների բնակության վայրը: Տե՛ս Մշակ, 1873, № 21, էջ 2, սյուն. 2-4:

³¹ Տե՛ս Հավելված 2:

³² ՀԱԱ, ֆոնդ 94, ցուցակ 7, գործ 24, էջ 6-7.

«От Эриванскаго Военнаго Губернатора № 523, 29 ноября 1857, г. Эривань Господину Директору канцелярии наместника Кавказскаго

Управляющий Нахичеванским уездом от 16 октября за № 4054 доносил мне, что по распоряжению Тифлискаго Епархиальнаго Начальника в сел. Амагу Даралагезскаго участка, при тамошнем монастыре Норавак открыты могилы Армянскаго Царя Сумбата и членов дома его, царствовавшего в тринадцатом столетии» (Երևանի զինվորական նահանգապետից, 29 նոյեմբերի, 1857 թ. Երևան

«Կովկասի փոխարքայի գրասենյակի պարոն վարիչին

Նախիջևանի գավառապետը հոկտեմբերի 16-ի № 4054 [գրությամբ] գեկուցել է ինձ, որ, Թիֆլիսի թեմակալի կարգադրությամբ, Դարալագեզի տեղամասի Ամաղու գյուղում՝ տեղի նորավանքի մոտ, հայտնաբերվել են 13-րդ դ. թագավորած Հայոց Սմբատ թագավորի և նրա ընտանիքի անդամների գերեզմանները»): Հետո շարադրված է այն, ինչ ինքը գեկուցագրով պահանջել է գավառապետից և ինչ ներկայացրել է Պ. Մաղաթյանը գեկուցագրով:

գրերի հայտնաբերման մասին՝ կից ուղարկելով նաև տապանագրերի իր ընթերցումները և «աղտոտությունների» տակից դրանց հայտնաբերելը վերագրելով իր երեք գործակիցներին³³։ Համենայնդեպս, Պ. Մաղաթյանը պաշտոնական և հրապարակային գրություններում առաջ է մղում իր երեք գործակիցներին՝ նաև փոքր-ինչ իր անունը ստվերելով։

Սակայն 1858 թ. Գևորգ Ախվերդյանին ուղարկած մասնավոր նամակում արդեն գրում է. «Կատարելով զանդառնալի հրաման Ձեր, թէ եւ սիրտս տխուր էր, միայն միւս երեսումն մի [ը]ստ միռջէ արծանացուցի զտապանագիրս արքային Սմբաթայ եւ ընդանեաց նորա, որոց գերեզմանքն ես ի 15 սեպտեմբերի 1857 ամի ի յայտ բերի ի նորավանքն Ամաղուայ, որ է ի Վայոց ձորն Սինեաց աշխարհին»³⁴ (ընդգծումն իմն է՝ Ա. Ա.)³⁵։

Այս մասնավոր նամակներին ավելանում են նաև ժամանակակիցների հուշերը. Պ. Մաղաթյանը հայտնի էր ոչ միայն որպես բանաստեղծ և աշուղ, այլև՝ ամբողջ Երևանի նահանգում, առաջին հերթին, որպես պետական ծառայող, հիշողությունը նրա գործունեության մասին դեռևս քսան տարի անց էլ մնում էր տեղաբնիկների շրջանում։ Այդ են վկայում Քաջբերունու հուշերը³⁶, «Մշակ» – «Մեղու...»-ական բանավեճերի ընթացքում Ալեքսանդրապոլից նրան պաշտպանելու փորձը։ Նրանց միանում է նաև ղուբացի Հակոբ Կարապետյանց անունով մեկը, ով Երևանում 1867-1868 թթ. ուսուցչության տարիներին Վայոց ձոր է մեկնում և լսում այս առնչությամբ տեղացիների վկայությունները և դրանց հիմամբ փորձում է նաև լույս սփռել Պ. Մաղաթյանի՝ այս գործում ունեցած ներդրման վրա։ Մեղադրելով թեմակալին՝ հոգվածագիրը գրում է. «Ուղիղն ասելով, նոյն իսկ Մաղաթեանցն քիչ օգուտ չբերեց այս ձեռնարկությանը, որուն

³³ Փորձ, 1877-1878, № 4, էջ 323-324։ Մինչդեռ «Ամաղու Նորավանք» բաժնում թեմակալը մի քանի տողանի նկարագրությամբ միայն արձանագրում է սրանց գոյությունը. «Ի կողմն հիսիսոյ կից ընդ որմոյն գոյ եկեղեցի սագաշէն ի կոփածոյ քարանց, որ կոչի դամբարան կառուցեալ յիշխանաց իշխան Տարսայիճէ ի վերայ տապանի եղբօր իւրոյ Սմբատայ արքայաշում Իշխանի...»։ **Զալալեանց**, *Ճանապարհորդություն...*, էջ 171։

³⁴ ՄՄ 3751, 342ա, «25 դեկտեմբերի, 1858 ամի, յերևան»։

³⁵ Նորավանքին նվիրված գործերից մեկի ծանոթության մեջ ևս գրում է. «Այս հրաշակառոյց երկյարկեայ Վանն գտանի հին Նախիջևանու երկրի, Տարալագեազ գաւառակի, Ամաղու գիւղն. յորում **գաի ես** ի 1857 ամի զՏապանս իշխանաց Օրբելեան ազգի, քանզի Գաւառակալեա էի անդ։ Ման. Հեղինակի» (ընդգծումն իմն է՝ Ա. Ա.)։ *Երկասիրությունք* կապիտան **Պետրոս Մաղաթեանի «Սկետաք»** մականունանելոյ, Սկսեալ ի 15 Յունվարի մինչ ց9 Մայիսի 1861 ամի, Բ. մասն, Բագու, 1884, էջ 87։

³⁶ «Քսան տարի արդէն անցել է Մաղաթեանի հեռանալուց յետոյ, բայց այնու ամենայնի Դարալագեազի հայերը առանձին յարգանքով են արտասանում նորա անունը», *Փորձ*, 1877-1878, № 4, էջ 346։

վրա Ս. Զ...ցը իր հիւրերին ճանապարհ գցելիս առանձին յանձնարարական նամակ էր գրած: Նա նշանակեց չորս ձիաւոր մինչև գործքի վերջն այդ երեք անձանց հետ մանգալու: Ամաղու վանուց թագաւորաց շիրիմները, որոնք փոշիներու տակ ծածկուած էին, նա ինքը իր բռնած մշակների հետ բաց արաւ և ինքն ստորագրեց նորանց: Իսկ ինչ որ վերաբերումէ այս ճանապարհորդութեան ծախսին, դա ամենքին հասկանալի է: Մանեկողքն մոլորովի (գալառապետ — Ա. Ա.) մարդիքն էին»³⁷ (ընդգծումն իմն է՝ Ա. Ա.): Այսինքն դեռևս դեպքերից տասը-քսան տարի անց էլ Պ. Մաղաթյանի անունը կապվում էր շիրիմների ինչպես հայտնաբերման, այնպես և ընթերցման-նկարագրութեան հետ³⁸: Եվ այս ամենի մասին միակ հրատարակութիւնը, որ ունէր Պ. Մաղաթյանը, և որը կարող էր համարվել որպէս իր անձի հրապարակալին պաշտպանութիւն, «Ճռաքաղ» հանդեսինն է³⁹: Սակայն որքան էլ Պ. Մաղաթյանը դա համարէր նորութիւն կամ իր և իր գործակիցների աշխատանքի արգասիք, միևնույն ժամանակ նա հստակորեն շեշտում է, որ այս պատմական իրողութիւնը տեղի է ունեցել Ս. արքեպս Զալալյանցի հանձնարարութեամբ և նրա նախաձեռնութեան շրջանակում: Ուրեմն, թեև արքեպիսկոպոսը այս մասին որևէ լրացուցիչ ծանուցում չի տալիս իր գրքում, 1850-ական թթ. և հետագայում ինչպէս ցարական վարչութիւններում, այնպէս էլ հայ գրական շրջանակներում նորավանքի Սուրբ Գրիգոր եկեղեցում Սմբատի դամբարանի և տապանագրերի հայտնաբերումը և առաջին նկարագրութիւնը կապվում են Պ. Մաղաթյանի անվան հետ: Սա է պատճառներից մեկը, որ թեև արդեն 1858 թ. Ս. Զալալյանցի գիրքը լույս էր տեսել, սակայն և՛ Գևորգ Ախվերդյանը, և՛ Ոսկան Հովհաննիսյանցը (Հայ պատմական նյութերի նկատմամբ վերջիններիս գիտական հետաքրքրութիւնը հայտնի է) նրանից

³⁷ Մշակ, 1873, № 21, էջ 2, սյուն. 4:

³⁸ Ավելին, ինչպէս երևում է «Մշակի»՝ այս հարցի առնչությամբ վերջին ծանուցումից, խմբագրությունը Հ. Բաբայանից ևս մեկ նամակ է ստացած լինում, սակայն հրատարակելու պայմանը լինում է այն, եթե «Մեղու...ն» շարունակի բանավեճը: Տէս 1873, № 26, էջ 4, սյուն. 1: Եվ, ըստ խմբագրականի, Հ. Բաբայանի արդեն հրատարակած նամակի և Հակոբ Կարապետյանցի տեղեկությունների միջև հակասություններ չկան, ինչը կողմնակիորեն ևս մեկ անգամ հաստատում է, որ, իրոք, Պ. Մաղաթյանը տապանագրերի ընթերցող-նկարագրող է:

³⁹ «...Ի վայոց Զորն Սիւնեաց Աշխարհին Հայոց, որ այժմ Դարալագեազ կոչի, է հոչակաւոր Նորավանք Անապատն Ամաղուայ, յորում ի 15ն Սեպտեմբերի 1857 ամի յանձնարարութեամբ Թեմակալ Առաջնորդին Տփլիսոյ Տեառն Սարգսի Արքեպիսկոպոսի Զալալեանց, անօրէնութեամբ իմով և աշխատանօք որդեգրի իմոյ Յովհաննիսի Բաբայեանց և աշխատակից Բահանայից Դարալագեազու Տէր Աւագայ Տիրացու Աբրահամեանց և Տէր Առաքելի Տէր Աստուածատրեանց, ի յայտ եկին գերեզմանք անդամոց տանն մեծի Իշխանացն Օրբելեանց», Ճռաքաղ, 1860, Ե, էջ 83:

խնդրում են ուղարկել այդ տապանագրերը՝ համարելով նրան ինչպես առաջին հայտնաբերող, այնպես և առաջին ընթերցող⁴⁰: Իսկ երկրորդ պատճառը գուցե այն է, որ Ս. Զալալյանցի հրատարակածից Պ. Մադաթյանինը ունի էական տարբերություններ:

Ինչպես նշեցի, Պ. Մադաթյանը միայն տապանագրերը բոլոր արձանագրություններին հղում է անում, իսկ Ս. Զալալյանցին նախապես ուղարկածն էլ պետք է սրանք լինեին: Սակայն ընթերցումների այդ տարբերակները Ս. Զալալյանցը չի հրատարակել: Եթե իրոք Ս. Զալալյանցին չէ. Բաբայանի ընթերցումներն են, որոնք նա կարող էր ստացած լինել արդեն Վայոց ձորի ամբողջական նկարագրությունների հետ հոկտեմբերի 22-ին, ուրեմն հստակորեն գործ ունենք ևս մեկ՝ մադաթյանական ընթերցման հետ:

Ինչ վերաբերում է մյուս արձանագրություններին, թեև երևում է, որ Պ. Մադաթյանը չի կարողացել մասնակցել մյուս տեղավայրերի ընթերցումներին⁴², այնուամենայնիվ, նա պետք է որ կազմած լինի այդ հնությունների ցանկը: Նախ նա իրեն, այսպես ասած, իրավունք է վերապահում Ս. Զալալյանցին ուղղված՝ հոկտեմբերի 22-ի գրություն մեջ ասելու. «Պատիւ ունիմ աւելացնել, որ ստորա-

⁴⁰ Բացի դրանից, Պ. Մադաթյանը մեծապես նպաստում էր նաև նոր հայտնաբերված պատմական սկզբնաղբյուրների հանդեպ հետաքրքրության ձևավորմանը, բանաստեղծական արձագանքներ էր տալիս պատմական իրողություններին՝ գործեր նվիրելով Օրբելյաններին, Նորավանին և առնասարակ Վայոց ձորին: Նախ Գևորգ Ախվերդյանին ուղղված նամակով ուղարկում է «Յատուր ի յայտ գալոյ յիշեալ դամբարանաց ես նեմիմ հոնուանօք սրտի ասացի զայս հանկարծածին բան հրաւիրանաց» երգը՝ նվիրված Սմբատ Իշխանաց Իշխան Օրբելյանին, որին արքա է կոչում: Տե՛ս ՄՄ 3751, 342բ-343բ (նամակը՝ 25 դեկտեմբերի, 1858, Երևան): Որը ապա հրատարակվում է «Յանկարծախօս բան՝ ասացեալ յատուր գիտի դամբարանաց Մեծափառ Իշխանացն տոհմին Օրպէլեանց» խորագրով: Տե՛ս *Հանազան երգք Տ. Պետրոսի Տ. Յովսէփեան Մադաթեանց Շամախեցոյ Ալէշաղ մականունանէլոյ, ի լոյս ընծայեաց Ոսկան Տ. Գէորգեան Յովհաննիսեանց Երևանեցի* (Նոր Բնար Հայաստանի, Տետրակ Բ.), Մոսկուա, 1859, էջ 97-98:

⁴¹ Հմմտ. ՀԱԱ, ֆոնդ 94, ցուցակ 7, գործ 24, էջ 5:

⁴² Աշխատանքները տեղ էն երկու ամսից ավելի, ինչպես վկայում է Հ. Բաբայանը: Տե՛ս *Մշակ*, 1873, № 13, էջ 2: Սկսել են 1857 թ. ամռանը, ավարտել՝ սեպտեմբերի 15-ին՝ դամբարանը հայտնաբերելու օրը: Իսկ Պ. Մադաթյանի վկայակոչմամբ. «Եվ ես էլ, պաշտոնական զբաղվածություն ունենալով, բարձրագույնություն Սարգիս Զալալյանցի ցանկության իրագործումը հանձնարարեցի իմ որդեգիր Հովհաննես Բաբայանին...», Հավելված 2: Այսինքն՝ նա իսկապես չի մասնակցել մյուս տեղավայրերի աշխատանքներին, այլ, ինչպես մի քանի անգամ վկայում է, ներկա է եղել միայն Նորավանում դամբարանի բացմանը:

գրութեան ճշդութիւնը կարծիքի չէ ենթարկվում և կէտերը ցոյց են տալիս եղծուած տառերի տեղերը»⁴³ (ընդգծումն իմն է՝ Ա. Ա.): Նման մի ձևակերպում նա անում է նաև Ոսկան Հովհաննիսյանցին ուղղված նամակում. «Եւ այսոքիկ դամբարանք ունին իւրաքանչիւրքն առանձին արձանագրութիւնք, զորս իսկութեամբ ձևակերպեցի ի ստորև»⁴⁴ (ընդգծումն իմն է՝ Ա. Ա.): Սա ցոյց է տալիս, որ նա, այնուհանդերձ, որոշակի գաղափար պիտի ունենար այդ ընթերցումների մասին: Ապա, դատելով Նախիջևանի գավառապետին ուղարկած զեկուցագրից, Պ. Մաղաթյանը գտնե նորավանքի մյուս վիմագրերին ծանոթ է եղել, գուցե դրանք ևս իր ընթերցմամբ կամ որոշ շտկումներով հասած լինեն Ս. Զալալյանցին:

Զեկուցագրում նա մանրամասն բացատրում է. «Ընդ որում, պարտքս եմ համարում զեկուցելու, որ, առաջին, ինչպես ապացուցում են այս վանքի պատերի՝ նշված Թագավորական տան անդամների արձանագրությունները, վանքին անվերադարձ (մշտական) նվիրաբերվել են զանազան անշարժ սեփականություն և գյուղեր, որոնցից են՝ Զիվա, Արփա, Տանձիկ, Ավալ (Շ, գուցե՝ Ավեշ), Ամաղու և այլն....»⁴⁵: Եվ ուսերեն զեկուցագրի՝ «НА ВЕЧНЫЯ ВРЕМЕНА» արտահայտությունը, օրինակ, կարող էր վերցրած լինել Ստեփանոս եպիսկոպոս Օրբելյանի նվիրատվությունից. «....Եվ յամէն հայրենիքն իմ արարի ժառանգութիւն սուրբ Ուխտս նորավանից, անխախտ և անդավի (անվիճարկելի, առանց դատի — Ա. Ա.) մինչ ի գալուստն Աստուծոյ....»⁴⁶ (ընդգծումն իմն է՝ Ա. Ա.): Ամեն դեպքում, պատմական տեղեկությունների աղբյուր Պ. Մաղաթյանի համար ծառայել են հենց նորավանքի նվիրատվական վիմագիր-գրառումները:

Ապա, արդեն ի պաշտոնե հնարավորություն ունենալով ճշտելու այդ տեղավայրերի տեղերին, նոր տեղեկություն է հաղորդում դրանց պատկանելության մասին՝ նշելով. «....Ներկայումս դրանք մուլքողարների (կալվածատերերի) սեփականությունն են»⁴⁷: Կալվածատիրական ձևերը, որ, ըստ ամենայնի, գալիս էին դեռևս պարսկական տիրապետության վերջին ժամանակներից, պահպանվում էին նաև ուսական տիրապետության շրջանում: Ավելին, ինչպես փաստում է Քաջբերունին, 1870-ական թթ. նորավանքը զրկված էր սեփականատիրական իրավունքից և մտնում էր այլ կալվածքի մեջ, իսկ «Ամաղու գիւղը մուլքադարական իրաւունքով պատկանում է Երևանաբնակ Ստեփաննոս Եղիազարեան-

⁴³ Փորձ, 1877-1878, № 4, էջ 324:

⁴⁴ Ճոաքադ, 1860, Ե, էջ 83:

⁴⁵ Հավելված 2:

⁴⁶ Զալալեանց, Ճանապարհորդութիւն...., էջ 175:

⁴⁷ Հավելված 2:

ցի ժառանգներին»⁴⁸: Թեև Պ. Մաղաթյանը չի մասնավորեցնում, թե նախկինում նորավանքին մշտական իրավունքով նվիրաբերված բոլոր գյուղերի այդ ժամանակվա սեփականատերերը ազգությամբ ովքեր են, այնուհանդերձ, ցույց է տալիս, որ դրանք այլևս գոնե վանքին կամ Օրբելյան տան որևէ անդամի չէին պատկանում⁴⁹: Ավելին, պաշտոնական զեկուցագրում Պ. Մաղաթյանը հատուկ ուշադրություն է բեռնում այն հարցին, որ Հայոց թագավորական ընտանիքի դամբարանը սեփականատիրական ներկայիս ձևի մեջ կորստյան վտանգի էր մատնվել՝ հայտնվելով փլատակների տակ. «Ամաղուի վանքում, որ կոչվում է «նորավանք», հատուկ շինությունում ի հայտ բերեցին Հայոց Սմբատ թագավորի և նրա ընտանիքի անդամների՝ փլատակներով պատված շիրիմները»⁵⁰:

Պ. Մաղաթյանի այսպիսի մանրամասնումները չէին կարող չունենալ հեռահար նպատակներ՝ ուղղորդելու կառավարությանը ուշադրության տակ առնելու այս հարցը: Բացի դրանից, ինչպես գրում է Քաջբերունին. «....Գիւղը, հողը և մենաստանի շրջակայքը լինում են նոյն գիւղի թուրք բնակիչների ձեռքում: Այս է պատճառը, որ այդ թուրքերը, 1857 թուից առաջ և յետոյ ոչխարանոց էին դարձրել հոշակաւոր նորավանքը, Սիւնեաց թեմի աթոռը, պատմական սրբավայրը, Օրբելեանց տոհմի դամբարանը: Երբ 1857 թուին երկու քահանայք և Յ. Բաբայեան արձանագրութիւններ էին ժողովում Զալալեան եպիսկոպոսի ճանապարհորդական գրքի համար, նոքա մեծ ջանքով մաքրել են տուել մենաստանը ոչխարի հօտի արտահոսութիւնից որպէս զի բացուին Օրբելեանց տոհմի տապանաքարերը»⁵¹: Համենայնդեպս, նկատելի է կալվածատիրական այդ ձևի բացասական ազդեցությունը հայ քրիստոնեական այս հուշարձանի պահպանության առումով, ինչին շրջակայքի թուրքերն էլ իրենց հերթին նպաստել են: Չնայած զեկուցագրի՝ տողատակերով այս հուշումներին, ինչպես երևում է Քաջբերունու վկայություններից, կառավարությունը առանձնակի ուշադրության չի առել այդ հարցը. 1870-ական թթ. վանքի շուրջ հողային սեփականություն ունեցող թուր-

⁴⁸ Արարատ, 1890, է. Քաջբերունի, Ճանապարհորդական նկատողութիւնք, էջ 403:

⁴⁹ Քաջբերունին վկայում է, որ պարսկական տիրապետության շրջանում Օրբելյան ժառանգները որոշակի ընդհատումներով տիրում էին նորավանքին և Ամաղու գյուղին՝ որպես բնիկ սեփականատերեր: Այդ ժառանգական իրավունքը 1813 թ. ևս մեկ անգամ հրովարտակով հաստատում է Պարսից Ֆաթալի շահը, և այդ տարվանից գյուղը և վանքը համարվում էին նրանց սեփականությունը: Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 400-403: Սակայն, ինչպես երևում է, ռուսական տիրապետության շրջանում խախտվել էր Օրբելյանների ժառանգական իրավունքը այդ տարածքի վրա:

⁵⁰ Հավելված 2:

⁵¹ Արարատ, 1890, է. էջ 403:

քերը նույնիսկ արգելել են ուխտավորներին վանք մտնել⁵²: Մինչդեռ այս ամենի համատեքստում շատ ավելի ընդգծելի և ակնառու է դառնում Պ. Մաղաթյանի շարժառիթը՝ Սմբատ արքայի դամբարանի հայտնաբերման մասին լուրը հայտնելու ցարական վարչություններին որոշակի շեշտադրումներով: Ավելին, երբ արդեն դիտարկում ենք այս հարցին Սեյազի բանաստեղծական անդրադարձները, պատկերը առավել քան հստականում է: «Երգ յօրինեալ ի դիմաց նորավանհից անապատին Վայոց Ձորոյ....» գործում, գրված արդեն 1861 թ. իր ծննդավայր Շամախիում, ասում է. «Ես զարմանաշէն Վայոց Ձորոյ Վան, / Օրբելեան ազգի շիրմաց դամբարան, / Նախ մեծ զարդ էի Հայոց աշխարհի՝ / Անասնոց Տաճկաց եղէ բնակարան, / Վատ վիճա՛կ, վատ վիճա՛կ, վատ վիճա՛կ, / ուստի՞ գքեզ գտա՛ք»⁵³: Այսինքն՝ բնիկ թագավորական, մշակութաստեղծ և քրիստոնեական տերերին փոխարինել էին եկվորները, որոնք ավերում էին տարածքը՝ դարձնելով այն իրենց անասունների կացարան:

Պ. Մաղաթյանի այս քայլի իրական պատճառն այն է, որ փաստացի, այսպես ասած, հողի վրա, վկայություն էր բացվում Հայոց թագավորական ընտանիքի մասին: Համենայնդեպս, առաջին իսկ տապանազիրը Սմբատ արքայի անունով է (իրականում, սա Սմբատի ոչ թե թագավորական, այլ մոնղոլներից քրիստոնյաներին տրվող «արքաուն» անունից առաջացած կոչում է)⁵⁴: Եվ Պ. Մաղաթյանն էլ շտապել է փաստական ապացույցները Հայոց թագավորական/իշխանապետական իրավունքների մասին ուղարկել ցարական վարչություններ: Վերջիններիս համար էլ իրենց հերթին սա ոչ սովորական իրողություն է եղել, որը դրական առումով աղմուկ է բարձրացրել: Ըստ իս, դա առավել կապված է եղել Հայոց թագավորության, Սմբատին որպես Հայոց արքա ներկայացնելու իրողության հետ, եթե ուշադրություն ենք դարձնում, թե, ի շարս մյուս կետերի, նահանգային վարչությունից հատկապես ո՞ր հարցերի վերաբերյալ են պարզաբանում ուզել. «....Քանի՞ գերեզման է հայտնաբերվել, Թագավորական տան հատկապես ո՞ր անդամների, ի՞նչն է հատկապես վկայում, որ դրանք Թա-

⁵² Նույն տեղում, էջ 403-404:

⁵³ Երկասիրությունը կապիտան Պետրոս Մաղաթյանի, 1884, էջ 87:

⁵⁴ Խոսմբ, իմարկե, Տարսային Օրբեյանի եղբայր, Սմբատ իշխանաց իշխան Օրբեյանի մասին է: Մոնղոլներից քրիստոնյաներին «արքաուն» կոչելու, Մանգու խանից Սմբատ իշխանաց իշխանի ստացած «արքաուն» անվանման և դրա հիման վրա վերջինիս արքա կոչելու մանրամասները տե՛ս Կ. Մաթևոսյան, *Նորավանքի վիճագրերը և հիշատակարանները*, Երևան, 2017, էջ 23-27: Պ. Մաղաթյանն ինքն էլ Հայոց պատմության գիտակ էր, հետագայի հրատարակություններում նա Սմբատին կոչում է «իշխանաց իշխան»: Սակայն սա հարցի էությունը այնքան էլ չի փոխում, ավելին, հաստատում է Հայոց իշխանապետությունն այս տարածքի վրա:

գավորական շիրիմներ են....» Լւն⁵⁵: Միով բանիվ, ցարական վարչության համար կարևոր են եղել այդ դամբարանի՝ իսկապես Թագավորական ընտանիքին պատկանելը և դրա հիմնավորումները:

Վերադառնալով «Մշակ» – «Մեղու....»-ական բանավեճերում Պ. Մադաթյանի անվան և այս գործում դերի որոշ անհամաձայն տեղեկությունների՝ նախ նկատեմ, որ այս բանավեճն ինքնին առավել անձնավորված բնույթ ուներ: Դժվար է ասել՝ արդյո՞ք «Մշակի» լուրը, թե Վայոց ձորին նվիրված հատվածը թեմակալի աշխատությանմբ չէ, այլ մեկ ուրիշի, արդեն իսկ սագրիչ բնույթ չուներ: Գուցե և թեմակալը իր գրքում այս գործի վերաբերյալ բազում մանրամասներ բաց է թողել, սակայն նա արդեն իսկ նշել էր, որ Պ. Մադաթյանը և իր գործակիցները իրեն օգնել են ամբողջ Վայոց ձորի հարցում գրավոր աշխատանքով: Ապա՝ Պ. Մադաթյանը թե՛ անձնական նամակներում, թե՛ զեկուցագրերում հստակորեն ներկայացնում է, որ սրբազանին ինքն անձամբ է հանդիպել, ապա սրբազանը «Թիֆլիս քաղաք վերադառնալու հրատապ անհրաժեշտության բերումով ինձ խնդրեց կազմել հիշատակված նկարագրությունը: Եվ ես էլ պաշտոնական զբաղվածություն ունենալով, բարձրսրբազնություն Սարգիս Զալալյանցի ցանկության իրագործումը հանձնարարեցի իմ որդեգիր Հովհաննես Բաբայանին....»⁵⁶: Իսկ արդեն այս բանավեճերի մյուս կողմում կանգնած պ. Զ. Գրիգորյանը այդ հանձնարարության հանգամանքները այսպես է ներկայացնում. «Ակրիճայ կոչուած հովտին մէջ հանդիպում է իւր բարեկամ պ. Մադաթեան Պետրոս-բէկին, որ իմանալով նորա դիտաւորութիւնը, նոյն գաւառի մէջ խօրեայ ախտին ճարակուելը նորան յայտնելով, թախանձումէ, կրկին նոյն տեղերը շուղեորել, այլ իրեն յանձնել գնալ այն հնութիւնները գրի առնուլ և բերել իրեն մատուցանել: Ս....նը պ. Մադաթեանի թախանձանաց զիջումն անելով, վերադառնում է և նոյն գաւառի գրաւոր տեղեկութիւնները ստանումէ Տիֆլիսում, ու նորա վերայ իւր ծանօթութիւնները յաւելլով, յիշատակումէ պ. Մադաթեանի և նորա գործակից երկուց քահանայից վաստակը, ըստ սովորութեան շատ հեղինակաց, ընդ նոսին և պ. Յովհաննէս Բաբայեանը խառնելով ի պատիւ Հայրազորին»⁵⁷: Ամեն դեպքում, փաստենք, որ նմանաբնույթ անհամաձայնությունները հարցի բուն էությունը և կարևորությունը չեն խաթարում: Սակայն սրանով ևս մեկ անգամ փաստվում է, որ իրապես Վայոց ձորի հնությունների և արձանագրությունների նկարագրության հանձնարարություն-համաձայնություն եղել է

⁵⁵ Հավելված 1:

⁵⁶ Հավելված 2:

⁵⁷ Մեղու Հայաստանի, 1873, № 17, էջ 1, սյուն. 4:

Ս. Զալալյանցի և Պ. Մաղաթյանի միջև, թեմակալը համոզված է եղել, որ աշխատանքն իրագործել է Պ. Մաղաթյանը, ինչը և հիշատակել է իր գրքում: Մասնավորեցնելով Պ. Մաղաթյանի բուն աշխատանքի սահմանը՝ փաստենք, որ նորավանքյան հատվածը և մասնավորապես այն հանգամանքը, որ Սմբատի դամբարանի մասին տեղեկությունը և տապանագրերը թեմակալի գրքում հայտնվել են, եղել է Պ. Մաղաթյանի և իր գործակիցների աշխատության, իսկ թե ի՞նչ ծավալով կամ թե ինչքան է վերցրել թեմակալը, ի՞նչը սրբագրել, պարզ չէ:

Սակայն, այնուհանդերձ, Պ. Մաղաթյանը թեմակալի ծանուցման վերաբերյալ անբավականություն ունեցել է, որ, բացի վարչություններին ուղարկած գրություններից, նաև «Ճանապարհորդություն...» գրքի լույսընծայումից հետո «Ճռաքաղում» հրատարակել է նամակը՝ իր և իր գործակիցների դերը նշանավորելու և տապանագրերի իր ընթերցումները՝ որպես առաջին ընթերցման տարբերակ գրական հանրությունը ծանոթացնելու համար⁵⁸: Ինչո՞ւ էր կարևոր Պ. Մաղաթյանի համար այդ հայտնաբերման փաստը արձանագրելը, ինչը չէր արել թեմակալը. ի շարս մյուս՝ վերոնշյալ պատճառների, ըստ երևույթին այն հանգամանքը, որ ո՛չ տեղաբնիկները, ո՛չ լայն առումով գրական հանրությունը տեղյակ չէին դամբարանի գոյությունից: Ցարական վարչություններին տեղյակ պահելը անշուշտ այլ ենթատեքստ և շարժառիթ ուներ, իսկ գրական հանրությանը՝ այլ: Խնդիրն այն է, որ եթե վանքերն ու եկեղեցիները, մյուս հնությունները տեսանելի էին, ապա դամբարանը ծածկված էր «աղտոտությունների» տակ, և մեծ հաշվով չէին կարող անգամ կռահել դրա գոյության մասին⁵⁹: Հենց այս «հայտնաբերումն» էլ, ի շարս մյուսների, դարձել է պատճառ՝ «Ճռաքաղում» առանձնակի ուշադրություն բեռնելու դամբարանի հայտնաբերմանը և տապանագրերին:

⁵⁸ Եվ դրանում, ըստ ամենայնի, դեռ է ունեցել նաև աշուղի երգերի հրատարակիչ Ոսկան Հովհաննիսյանց երևանցին. 1859 թ. հրատարակության՝ «Յանկարծախօս բան՝ ասացեալ յաւուր գիտի դամբարանաց Մեծափառ Իշխանացն տոհմին Օրպէլեանց» գործի ծանոթության մեջ հրատարակիչը գրում է. «Զայսմանէ լիակատար տեղեկութիւն կհրատարակուի Ճռաքաղ բազմաշան Ամսարգի (վրիպակը հրատարակչական է – Ա. Ա.) մէջ՝ ի գիտութիւն մեր ամենասիրելի համագգեաց: Ո. Յ.»։ *Զանազան երգք Տ. Պետրոսի Տ. Յովսէփեան Մաղաթեանց Շամախեցոյ*, 1859, էջ 97: Ինչպես արդեն նշել եմ, «Ճռաքաղում» հրատարակված է Ոսկան Հովհաննիսյանցին ուղղած նամակից՝ սրան վերաբերող հատվածը: Եվ գուցե հրատարակիչն ինքն է ուղղորդել «լիակատար» ծանոթություն տալու գրական հանրությանը այս գործի վերաբերյալ, քանի որ այն բացակայում էր «Ճանապարհորդություն...» գրքում:

⁵⁹ Իսկ Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն մահանգին Սիսական» գիրքն առաջին անգամ ամբողջական լույս է տեսել 1859 թ. Փարիզում Կարապետ վարդապետ Շահնազարյանցի աշխատասիրությամբ, այսինքն՝ Ս. Զալալյանցի գրից մեկ տարի անց, հետևաբար գրական լայն հանրությանը ավելի ուշ է ծանոթ դարձել:

Ինչպես նշեցի, Պ. Մաղաթյանի անունը մի քանի տասնամյակ դեռևս կապվում էր Սմբատի դամբարանի հայտնաբերման և տապանագրերի ընթերցման հետ: Մինչդեռ հետազայում կարծես խամրեց հիշողությունը նրա գործունեության վերաբերյալ, և վերջին անգրագարձը, որ կա Պ. Մաղաթյանի մասնակցությանը այս գործին, Քաջբերունուն է (1870-ական թթ. վերջ): Իսկ նա միայն նյութական օժանդակությունն ու ղեկավարումն է ընդգծում: Փոխարեն նրա՝ Հ. Ղ. Ալիշանը, Կ. Կոստանյանցը և Ս. Տեր-Ավետիսյանը արդեն որպես աշխատասիրող և «Ճանապարհորդություն....» գրքում լույս տեսածի հեղինակ նշում են հատկապես Հ. Բաբայանի և երկու քահանաների անունները: Եվ բնականորեն, Ս. Տեր-Ավետիսյանի ժամանակագրական դասակարգումից⁶⁰ դուրս է մնում Պ. Մաղաթյանի անունը, որը, «Ճանապարհորդություն....» գրքում եղածից տարընթերցումներով տապանագրեր էր հրատարակել:

Ուստի Պ. Մաղաթյանը, որպես Սմբատի դամբարանի տապանագրերի ընթերցող, առաջինն է, իսկ ըստ լույսընծայման՝ Ս. Զալալյանցից հետո երկրորդը:

Տապանագրերի մադաթյանական ընթերցումները և դրանց դերը

Արդ, ինչո՞վ են կարևոր ՄՄ 3751-ի և «Ճռաքաղի» մաղաթյանական ընթերցումները: Այս երկուսի՝ ձեռագիր և տպագիր տապանագրերի միջև կան սակավաթիվ ուղղագրական տարբերություններ, որոնք տպագրական և հրատարակչական փոփոխություններ են և տարբեր ընթերցումներ չեն կարող համարվել: Իսկ Ս. Զալալյանցի և Պ. Մաղաթյանի հրատարակածները արդեն նույնական չեն: Ահա որոշ էական տարբերություններ.

տապանագրերի առաջին ընթերցման հեղինակ համարվող Ս. Զալալյանցին հետագա բոլոր ընթերցողները⁶¹ կամ ուսումնասիրողները հակադրվել են հենց

⁶⁰ Առաջին տեղը հատկացնելով Ս. Զալալյանցին՝ գրում է. «Զալալյանցից և Քաջբերունուց հետո, ի շարս նորավանքի արձանագրությունների հավաքողների և հրատարակողների, հարկ է մատնանշել Ալիշանի «Սիսական» հիմնադր աշխատությունը» («После Джаляляна и Каджберуни среди собирателей и издателей надписей Норава́нка мы должны указать на фундаментальный труд Алишана "Сисакан".....»). Ս. Վ. Տեր-Ավետիսյան, *Հայագիտական հետազոտություններ*, Երևան, 2010, «Надписи Норава́нка» (с. 474-495), էջ 475:

⁶¹ Ժամանակագրորեն ընթերցողներ և հրատարակողներ են՝ Սարգիս Զալալյանց, Քաջբերունի, Ղևոնդ Ալիշան, Երվանդ Լալայան, Սեդրակ Բարխուդարյան, Կարեն Մաքսույան: *Материалы по археологии Кавказа* ժողովածուի կազմողները, Սմբատ Տեր-Ավետիսյանը և Մայիլ Սթոունը ոչ բոլոր տապանագրերի ընթերցումներն են գետեղել: Տե՛ս և հմմտ. *Материалы по археологии Кавказа*, Выпуск XIII, под редакцией графини П. С. Уваровой и Х. И. Кучукъ-Иоаннесова, Москва, 1916, с. 180-181, 190. Ս. Վ. Տեր-Ավետիսյան, *Հայագիտական հետազոտություններ*, էջ 474-495. M. E. Stone, "Further Armenian Inscriptions from Noravank", *Apocrypha, Pseudepigrapha and Armenian Studies, Collected Papers, Volume*

առաջին՝ Սմբատ իշխանաց իշխան Օրբելյանի տապանի թվականի առնչությամբ: Կ. Մաթևոսյանն էլ արձանագրել է, որ թեմակալի «ՁԻԹ» ընթերցումը ճիշտ չէ, և պետք է լիներ «ՁԻԲ»⁶², որը ճիշտ է Պ. Մաղաթյանի ընթերցման երկու տարբերակում էլ՝ ձեռագիր և տպագիր:

Նույնը վերաբերում է իշխանուհի Մինախաթունի տապանի թվականին. «Ի թվին 2. Խ. է. Թագազարմ արքայուհին է Մինայ խաթունն դուստր մեծ կողմնակալին Աղուանից Զալալին»: Պ. Մաղաթյանի «ՁԽԷ» ընթերցման փոխարեն Ս. Զալալյանցինը «ՁԽԵ»⁶³ է: Ըստ Ս. Բարխուդարյանի և Կ. Մաթևոսյանի⁶⁴ ճշգրտումներին՝ Պ. Մաղաթյանի ընթերցումը ճիշտ է:

Տարսայիճի և Արզուխաթունի որդի Փախրադուլա իշխանի անունը Պ. Մաղաթյանի երկու տարբերակում էլ սխալ ընթերցում է՝ «Փախրադսիլայ», մինչդեռ Ս. Զալալյանցինը ճիշտ է: Սակայն սա վերջինս կարող էր ուղղած լինել ըստ Ստեփանոս Օրբելյանի Պատմության:

5-րդ՝ էլիկում իշխանի տապանագիրը Ս. Զալալյանցը հրատարակել է այսպես. «Ի թվին 2ԽԹ. զգեղեցկատեսիլն էլիկում....»⁶⁵, իսկ Պ. Մաղաթյանինը. «Թվին 2. Խ. Թ. Զգեղեցկատիպն էլիկում....»⁶⁶:

8-րդ՝ Բուղդա իշխանի տապանագրին՝ Պ. Մաղաթյանի «Յետ յոլով քաջ մրցմանց» ձևը Ս. Զալալյանցը հրատարակել է «Յետ յոլով քաջ մրցանաց», մինչդեռ վերջին բառի ճիշտ ընթերցումը «մրցմանց» է: Այս տապանագրի մաղաթյանական ընթերցումն ամբողջության մեջ ավելի ճշգրիտ է:

Հետագայում ուսումնասիրողները, անդրադառնալով Ս. Զալալյանցի հրատարակությանը և բարձր գնահատելով նրա դերը որպես առաջին արձանագրողի, այնուհանդերձ նկատել են, որ ընթերցումները սխալաշատ են: Կ. Կոստանյանցը գրում է. «....Ի յայտ եկն եւ այն եթէ ստորագրութիւնն Վայոց ձորոյ ի գիրս Զալալեանի գործ է գրասէր առն երիտասարդի յԱղէքսանդրապոլ քաղաքէ, Յովհաննու Յակովբեան Բաբայեանց, որ ի ժամանակի շրջագայութեան վարդապե-

II, Leuven-Paris-Dudley, 2006 (p. 813-859), p. 824 (միայն Բուրթլի ողի Սմբատի տապանագիրն է):

⁶² Կ. Մաթևոսյան, *Նորավանք*, էջ 137:

⁶³ Զալալեանց, *Ճանապարհորդություններ...*, 1858, էջ 174:

⁶⁴ Հմմտ. Դիվան հայ վիմագրության, Պրակ III, Վայոց ձոր. եղեգնաձորի և Աղիգեղկովի շրջաններ, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 237, Հմ. 776: Կ. Մաթևոսյան, *Նորավանք*, էջ 139:

⁶⁵ Զալալեանց, *Ճանապարհորդություններ...*, էջ 173:

⁶⁶ Ըստ մյուս բոլոր հրատարակությունների՝ մաղաթյանական ընթերցումը ճիշտ է: Հմմտ. Դիվան հայ վիմագրության, կազմեց Ս. Բարխուդարյան, էջ 237, Հմ. 775: Կ. Մաթևոսյան, *Նորավանք*, էջ 138, Հմ. 99: «Զգեղեցկատեսիլ» ընթերցումը կա միայն Ս. Տեր-Ավետիսյանի տարբերակում. տե՛ս Ս. Վ. Տեր-Ավետիսյան, *Հայագիտական հետազոտություններ*, էջ 490:

տին իբր քարտուղար ի սպասու կայր առաջի գաւառապետին Վայոց ձորոյ, ծանաւթ բանաստեղծին Պետրոսի Մաղաթեանց Սէյադ մականունելոյ. Չեն ինչ զարմանք ապաքէն եթէ եւ սպրդեալ իցեն ի գիրս Զալալեանի շփոթութիւնք թուականաց եւ անյարիր դարձուածք բանից, վկայք անփորձ լինելոյ աւժանդակաց նորին»⁶⁷: Այսինքն՝ անճշտությունների պատճառ համարում է թեմակալին օժանդակողների՝ վիմագրեր ընթերցելու փորձառության պակասը: Մինչդեռ գրեթե միաժամանակ հրատարակված՝ ճռաքաղյան տարբերակը ցույց է տալիս, որ եղել են առավել վարժ և հմուտ ընթերցումներ, որոնք իսկապես կարող էին լրացման և համեմատության աղբյուր լինել հետագայի ուսումնասիրողների համար, ինչպես որ եղել են իրականում, սակայն միջնորդված: Ահա թե ինչպես:

Ըստ որոշ համեմատությունների՝ հենց այս հանդեսի նյութին ծանոթ է եղել Դ. Ալիշանը, և դրանից, որպես ընթերցման տարբերակից, վերջինս լիապես օգտվել է⁶⁸: Թեև Պ. Մաղաթյանի անունը կամ «Ճռաքաղ»-ը «Միսականում» չի հիշատակվում, սակայն Դ. Ալիշանը նորավանքի բոլոր վիմագրերի ընթերցումը վերագրում է Հ. Բաբայանին՝ Պ. Մաղաթյանի որդեգրին. «....Ընթերցողներս ի Յովհաննէ Բաբայեանց ի խնդրոյ Զալալեան Սարգսի եպիսկոպոսի որ և հրատարակեացն....»⁶⁹: Ս. Զալալյանցի հիշատակման մեջ բացակայում է Հովհաննեսի ազգանունը, ինչպես նաև մասնավորեցված չէ աշխատանքի այն սահմանը, որ արել է վերջինս: Մինչդեռ Հովհաննեսը ազգանվամբ նշված է հենց «Ճռաքաղում», ապա միայն այստեղ է, որ Պ. Մաղաթյանը որպես աշխատասիրող առանձնացրել-ընդգծել է Հ. Բաբայանի անունը: Դ. Ալիշանը կարող էր օգտված լինել Քաջբերունու գրություններից կամ «Մշակ» – «Մեղու Հայաստանի» բանավեճերից, սակայն Քաջբերունին ընթերցման հարցում երկրորդ տեղն է հատկացնում Հ. Բաբայանին:

Դ. Ալիշանի՝ տապանագրերի և առհասարակ նորավանքի վիմագրերի ընթերցումը Հ. Բաբայանին վերագրելը, ըստ ամենայնի, բխում է հենց Պ. Մաղաթյանի ճռաքաղյան հրատարակությունից: Ապա՝ հ. Դ. Ալիշանը այս տապանագրերը դասավորում է այն նույն հերթականությամբ, ինչպես որ կան «Ճռաքա-

⁶⁷ Կ. Կոստանեանց, *Յուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց*, Ս.-Պետերբուրգ, 1913, «Նախաբան», էջ XXIV:

⁶⁸ Իսկ, ինչպես գիտենք, հ. Դ. Ալիշանը չէր կարող տեսնել և ընթերցել այդ վիմագրերը, այլ միայն ի մի բերել արդեն եղած հրատարակությունները. նրա աշխատությունները ձեռագիր և տպագիր սկզբնաղբյուրների վրա են հիմնված:

⁶⁹ Հ. Դ. Ալիշան, *Միսական. Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893*, էջ 198:

ղում», այսինքն՝ Պ. Մաղաթյանի շարակարգումով⁷⁰։ Այնուհանդերձ, ամենաուշագրավը բնագրական ընդհանրություններն են։ Թեև Ղ. Ալիշանը լրացումներ, սրբագրումներ և փոփոխություններ արել է ըստ մյուս՝ իրեն նախորդող՝ Ս. Զալալյանցի և Քաջբերունու աղբյուրների, սակայն Պ. Մաղաթյանինից վերցրել է այն ընթերցումները, որոնք նախորդների հրատարակածում չկան։ Այսպես.

Տարսայիճ իշխանի տապանագրի մեջ ուշագրավ է «աթաբակ» և «աթաբէկ» տարբերությունը։ Պ. Մաղաթյանի երկու՝ ձեռագիր և տպագիր տարբերակներում այս բառը ընթերցված է «աթաբակ»։ «...Հզոր և մեծ գործակալին և քաջապահ մենամարտին աթաբակ Տարսայիճին», մինչդեռ, մինչև Ղ. Ալիշանի հրատարակությունը, Քաջբերունու և Ս. Զալալյանցի հրատարակածներում «աթաբէկ» ձևն է⁷¹։ Եթե Ղ. Ալիշանը իրեն որպես նախորդ ունենար միայն այս վերջին երկուսին, ինքն ևս կգրեր «աթաբէկ», մինչդեռ նրա հրատարակածում «Ճռաքաղի»՝ մաղաթյանական տարբերակն է՝ «աթաբակ»⁷²։ Ս. Բարխուդարյանը հրատարակել է միայն արձանագրությունը՝ «Աթաբէկ» տարբերակով, և ծանոթությամբ նշել է, որ այս տապանաքարի միայն ջարդված մասերն են տեղում. «...Ոչնչացված է եղել 1916 թվականից առաջ...»⁷³։ Ե. Լալայանը ևս ընթերցում է «Աթաբակ»⁷⁴, որը կարող էր վերցրած լինել Ղ. Ալիշանի հրատարակությունից⁷⁵։

⁷⁰ Պ. Մաղաթյանը դասավորել է սրանք ժամանակագրորեն և ըստ ընտանեկան կապերի։ Այստեղ ակնառու օրինակը յոթերորդ՝ Բուրթելի ուղի Սմբատի տապանի դիրքն է։ Քաջբերունին սա չի արձանագրել, Ս. Զալալյանցն էլ իշխանական տապանագրերը դասավորել է ըստ ավագության կարգի՝ համարակալելով դրանք մեկից ութ։ Այսինքն՝ իր նախորդներից Ղ. Ալիշանը տապանագրերի այսպիսի դասավորություն կարող էր վերցնել միայն «Ճռաքաղից»։ Ե. Լալայանի շարակարգումն էլ գրեթե համապատասխանում է Պ. Մաղաթյանի դրածին։ Բայց նա ցույց է տալիս շարքային դասավորությունը, որից, սակայն, դուրս է Բուրթելի ուղի Սմբատինը։ Իսկ «Սիսականում» շարքային դիրքի մասին տեղեկությունը բացակայում է, քանի որ այն Պ. Մաղաթյանը ևս չի արձանագրել։

⁷¹ **Զալալեանց**, *Ճանապարհորդություն...*, էջ 173։ *Արարատ*, 1890, Ա, **Քաջբերունի**, *Ճանապարհորդական նկատողությունք*, էջ 35։ Ղ. Ալիշանը Փախաղոյա իշխանի տապանագիրը հրատարակել է ըստ Քաջբերունու (*Արարատ*, 1890, Ա, էջ 34), իսկ Տարսային իշխանինը՝ ըստ «Ճռաքաղի»՝ միայն վերջինիս «հզոր» բառը դարձնելով «հզար»։ Տե՛ս **Հ. Ղ. Ալիշան**, *Սիսական*, էջ 192, Հ^մ Գ։ Հմմտ. նաև **Կ. Մաթևոսյան**, *Նորավանք*, էջ 137, Հ^մ 97 (աթաբէկ)։

⁷² **Հ. Ղ. Ալիշան**, *Սիսական*, էջ 192, Հ^մ Բ։ Լիպարիտ Օրբելյանի վիմագրերում գործածված է «աթաբակ», էլիկումի փոխարեն՝ «Ալիկում» ձևը, այսինքն՝ այս վիմագրերին առավել բնորոշ է է-ի փոխարեն ա տարբերակը։ Տե՛ս **Կ. Մաթևոսյան**, *Նորավանք*, էջ 86-87, Հ^մ 1-2, 4, 9 կմ։

⁷³ Հմմտ. *Գիվան հայ վիմագրության*, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, էջ 236, Հ^մ 773։

⁷⁴ **Երուսանդ Լալայեան**, *Ազգագրական հանդէս, Տասնեվեցերորդ տարի, XXVI գիրք*, 1916, Թիֆլիս, 1917, էջ 58։

⁷⁵ Տարսային իշխանի և Փախաղոյա իշխանի տապանագրերի հնչյունական բացարձակ համամասնությունը Ղ. Ալիշանի հրատարակածին ենթադրել է տալիս, որ Ե. Լալայանի աղբյուր-

էլիկումի կին և Բուրթելի մայր Թամթախաթուն իշխանուհու տապանագիրը անխաթար ընթերցմամբ կա միայն «Ճռաքաղում», որի հիմամբ՝ և «Սիսականում»⁷⁶:

Այնուհանդերձ, ամենաուշագրավ փաստը առնչվում է Բուղդա իշխանի տապանագրին. Ս. Ջալալյանցի ընթերցումն այսպիսին է. «Մեծ Բուրթէլին զգեղահրաշ Բուղդային...»⁷⁷: Իսկ Մադաթյանինը՝ այսպես. «Եղբայր մեծ Բուրթելին զգեղահրաշ Բուղդային...»: «Եղբայր մեծ» արտահայտությունը Պ. Մադաթյանը նշում է առանց լրացման կամ կասկածի: Մինչդեռ Ս. Բարխուդարյանի հրատարակության մեջ երևում է, որ այդ սկզբի մասը՝ ձախից գրությունները, չկան, և հրատարակիչներն այն վերականգնման-լրացման փակագծի մեջ են առել⁷⁸: Քաջբերունու և Ս. Ջալալյանցի ընթերցումներում ևս սկզբի «Եղբայր» բառը բացակայում է⁷⁹: Եվ միայն Ղ. Ալիշանն է, որ վերականգնում է այն⁸⁰, ինչն անում է մադաթյանական ընթերցումների հիման վրա: Ուստի, ըստ այս տապանագրերի ընթերցման ժամանակագրության, Ս. Բարխուդարյանն էլ լրացրել է «Եղբայր»⁸¹ բառը հավանաբար ըստ «Սիսականի», հետևաբար և՛ ըստ Պ. Մադաթյանի: Թեև Ե. Լալայանի և МАК-ի ընթերցումների մեջ ևս կա «Եղբայր» բառը⁸², հրատարակված համապատասխանաբար 1917 և 1916 թթ., սակայն պարզ չէ՝ տպագրի՞ր աղբյուրից է վերցված, թե՞ իր/իրենց ընթերցումն է: Քանի որ այս տապանի համար Ե. Լալայանը գրում է. «Կոտրուած և դուրս ձգուած մի գերեզմանաքարի վրայ»⁸³: Վնասվածությունն արձանագրում է նաև Ս. Ջալալյանցը⁸⁴: Ուրեմն, չնայած առաջին ընթերցումների ժամանակ արդեն իսկ առկա վնասվածությունը, Պ. Մադաթյանն է այս սկզբի «Եղբայր» բառի ժամանակագրորեն առա-

րը եղել է նաև «Սիսական»-ը: Հմմտ. Հ. Ղ. Ալիշան, Սիսական, էջ 192, Հմմտ. Բ-Գ: Երուանդ Լալայեան, Ազգագրական հանդէս, էջ 58:

⁷⁶ Հմմտ. Արարատ, 1890, Ա, էջ 34: Իսկ Ս. Ջալալյանցի ընթերցման մեջ բացակայում է, օրինակ, «Ջաշխարհաշէն» բառը, իսկ Թամթախաթուն անունը ընթերցված է «Թանթախաթուն»: Ջալալեանց, Ճանապարհորդություն..., էջ 174:

⁷⁷ Ջալալեանց, Ճանապարհորդություն..., էջ 174:

⁷⁸ Դիվան հայ վիմագրության, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, էջ 237, Հմմտ. 777: Հմմտ. Կ. Մաթևոսյան, Նորավանք, էջ 139, Հմմտ. 101:

⁷⁹ Հմմտ. Արարատ, 1889, ԺԲ, էջ 660: Ջալալեանց, Ճանապարհորդություն..., էջ 174:

⁸⁰ Հ. Ղ. Ալիշան, Սիսական, էջ 193, Հմմտ. Բ:

⁸¹ Միայն թե բառը Բերականոնեն փոխել է համապատասխանեցնելու «Պուղտային» ձևին:

⁸² Երուանդ Լալայեան, Ազգագրական հանդէս, էջ 60: Материалы..., под редакцией графини П. С. Уваровой и Х. И. Кучукъ-Иоаннесова, с. 180, ном. 190.

⁸³ Երուանդ Լալայեան, Ազգագրական հանդէս, էջ 60:

⁸⁴ «Ի վերայ եօթներորդ տապանի կէս մասն եղծեալ...»: Ջալալեանց, Ճանապարհորդություն..., էջ 174:

ջին և միակ ընթերցողը, և Ղ. Ալիշանը, առանց հիշատակման, օգտագործել է այն, որից էլ անցել է նաև տապանագրերի մյուս հրատարակություններին:

Ուստի տապանագրերի ճառագողյան հրատարակությունը որոշ դեր է խաղացել կարևոր այս սկզբնաղբյուրի, հատկապես վնասված կամ կոտրված տապանագրերի բնագրական առավել ճշգրիտ պատկեր ստանալու հարցում:

Այսպիսով՝ այս տապանագրերի մանրագնին ուսումնասիրությունը, համեմատությունը արդեն եղած ընթերցումների հետ կարող է որոշակի նյութ ապահովել դրանց ուսումնասիրության համար: Պ. Մաղաթյանը իր գործակիցների հետ Սմբատի դամբարանի առաջին ի հայտ բերողն ու այդ տապանագրերի առաջին ընթերցողն է, որի ընթերցումները, թեև առանց անվանական հիշատակման, որոշ առումով, շնորհիվ Ղ. Ալիշանի, դեր ունեցել են ընթերցումների ճշգրտման և լրացման գործում:

ՀԱՎԵԼՎԱԾ

1. ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԳԱՎԱՌԱՊԵՏԻ ԶԵԿՈՒՅԱԳՐԻՆ, ՀԱԱ, ֆոնդ 94, ցուցակ 7, գործ 24, էջ 2

N 3578, 28 октября, секретно?

Эриванскаго военного губернатора управляющаго гражданскою частию
///

по части секретаря

№ 334

21 октября 1857, Эривань

Господину Управляющему Нахичеванским уездом

В донесение рапорта Вашего Высокоблагородия от 16 сего Октября за № 4054,

насчет открытых в селении Амагу Даралагезскаго участка могил Армянскаго царя Сумбата и членов дома его царствовавшего в тринадцатом столетии, – предлагаю Вам, /// доставить мне полныя по этому интересному предмету сведения о том: сколько именно открыто могил, каких именно членов Царскаго дома, что именно обличает, что это Царские могилы, надписи или найденная принадлежности, что именно при этом найдено и нельзя ли снять надписи? /// /// /// /// что именно подало повод к поискам и как достигнуто открытие могил?

Генерал Майор Назаров

Секретарь Щербатов

(Ձերդ բարձրաբանությունն այս հոկտեմբերի 16-ի № 4054 զեկուցագրի կապակցությամբ, որ վերաբերում է 13-րդ դարում թագավորած՝ Հայոց Սմբատ թագավորի և նրա ընտանիքի անդամների գերեզմանների՝ Դարալագյազի տեղամասի Ամադու գյուղում հայտնաբերմանը, կարգադրում եմ Ձեզ տրամադրել ինձ այդ հետաքրքիր իրողության վերաբերյալ տեղեկություններ այն առումով, թե՞ քանի՞ գերեզման է հայտնաբերվել, Թագավորական տան հատկապես ո՞ր անդամների, ի՞նչն է հատկապես վկայում, որ դրանք Թագավորական շիրիմներ են՝ արձանագրությունները, թե՞ գտնված պատկանելիքները, ի՞նչ է հատկապես դրա մոտ հայտնաբերվել և հնարավոր չէ՞ արձանագրությունները ընդօրինակել, ի՞նչն է հատկապես որոնումների առիթ ծառայել և ինչպե՞ս է կատարվել գերեզմանների հայտնաբերումը: Գեներալ-մայոր Նազարով, Բարտոլոմեոս Շչերբատով)⁸⁵:

2. ՊԵՏՐՈՍ ՄԱԴԱԹՅԱՆԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԳԱՎԱՌԱՊԵՏԻՆ, ՀԱԱ, ֆոնդ 94, ցուցակ 7, գործ 24, էջ 3

№ 4244, 28 октября, 1857, г. Нахичеван,

15 ноября, 1857 года

№ 3827

Господину управляющему Нахичеванским уездом, на надпись, отъ 28 истекшаго Октября за № 4244^{Мб}, имею честь почтительнейше донести, что Тифлисский Армянский Епархиальный Архиепископ Саркис Джалалов летом сего года был на Агридже Новобаязетскаго уезда, с целью приступить к составлению подробнаго описания всем древним: монастырям, церквам и памятникам, состоящим во вверенном мне участке, называвшемся при владычестве Армян, Вайоц Цор (Теснина воплей), для включения в Путешествие свое по Армении, но имея экстренную надобность возвратится в город Тифлис, просил меня составить сказанное описание и я будучи занят по службе, исполнение желания Высокопреосвященнаго Саркиса Джалалова поручил питомцу моему Оганесу Бабаеву, который вместе с Даралагезскими священниками Аваком тирацу-Апраамовым и Аракемом Тер-Аствацатуровым открыл при Амагинском монастыре, называемом «Нораванк», в особом здании пок-

⁸⁵ Բոլոր ուսերեն գրությունների հայերեն թարգմանությունը իմն է Ա. Ա.:

рытия развалинами могилы Армянского Царя Сумбата и членовъ дома его, как благоусмотреть изволит Его Высокоблагородие, из прилагаемых у сего с переводом надписей снятых со всею верностию с надмогильных камней. При чем долгом считаю доложить, что, во первых, как доказывают высеченные на стенах сего монастыря памятники сказанными членами Царского дома, были пожертвованы на вечныя времена в пользу монастыря разныя недвижимыя собственности и деревни, из коих: Чива, Арпа, Данзик, Авал (?), Амагу и другия, ныне находятся во владении мюлькочаров и, во вторых, полное описание всех древностей, отправлено мною по почте 22 минувшаго октября в г. Тифлис к Архиепископу Джалалову.

Начальник Даралагезскаго участка капитан Мадат[ов].

№ 1786

10 ноября 1857 года,

Сел. Кешиш-кенд. (Պատիվ ունեւ մեծագոյն հարգանքով գեկուցելու, որ Թիֆլիսի հայոց թեմակալ արքեպիսկոպոս Սարգիս Զալալյանցը այս տարվա ամռանը Նոր-Բայազետի Ագրիչ (Այրիշա) գյուղում էր գտնվում՝ ձեռնամուխ լինելու կազմելու բոլոր հնությունների՝ վանքերի, եկեղեցիների և հուշարձանների մանրամասն նկարագրությունը, որոնք իմ կառավարման ներքո գտնվող տեղամասի մեջ են, որը Հայոց տիրապետության շրջանում կոչվել է Վայոց Ձոր (Ողբերի կիրճ), իր «Հանապարհորդութիւն ի Հայաստան» գրքում գետեղելու համար: Սակայն Թիֆլիս քաղաք վերադառնալու հրատապ անհրաժեշտության բերումով ինձ խնդրեց կազմել հիշատակված նկարագրությունը: Եվ ես էլ, պաշտոնական զբաղվածություն ունենալով, բարձր սրբազնություն Սարգիս Զալալյանցի ցանկության իրագործումը հանձնարարեցի իմ որդեգիր Հովհաննես Բաբայանին, որը դարալազյազցի քահանաներ Ավագ տիրացու Աբրահամյանի և Առաքել Տեր-Աստվածատուրյանի հետ միասին Ամաղուի վանքում, որ կոչվում է «Նորավանք», հատուկ շինությունում ի հայտ բերեցին Հայոց Սմբատ թագավորի և նրա ընտանիքի անդամների՝ փլատակներով պատված շիրիմները, ինչպես որ Ձերդ բարձրարեծննդությունը կբարեհաճի նկատել սրան կցվողից՝ արձանագրությունների բարգմանությամբ, որոնք ամենայն իսկությամբ ընդօրինակվել են տապանագրերից: Ընդ որում, պարտքս եմ համարում գեկուցելու, որ, առաջին, ինչպես ասպացուցում են այս վանքի պատերի՝ նշված Թագավորական տան անդամների արձանագրությունները, վանքին անվերադարձ (մշտական) նվի-

րաբերվել են զանազան անշարժ սեփականություն և գյուղեր, որոնցից են՝ Զիվա, Արփա, Տանձիկ, Ավալ (, գուցե՝ Ավեշ), Ամաղու և այլք: Ներկայումս դրանք մոլոդոգարների (կալվածատերերի) սեփականությունն են: Եվ երկրորդ՝ ես բոլոր հնությունների լիակատար նկարագրությունը անցյալ՝ հոկտեմբերի 22-ին ուղարկել եմ Թիֆլիս՝ արհեստական Ջալալյանցին:

Դարալագյազի (Վայոց ձոր) տեղամասի պետ կապիտան Մադաթյան:

№ 1786

1857 թ. նոյեմբերի 10, գյուղ Քեշիշենդ (Եղեգնաձոր)):

3. ՏԱՊԱՆԱԳԻՐՔ, ՄԾ 3751, 342բ, Գևորգ Ախվերդյանին ուղարկած նամակից, 25 դեկտեմբերի 1858 թ., Երևան

1. Տապանագիր Սմայատայ արքայի.

«Սմայատ արքային է տապանս յիշեցեմ: Թ. Զ. Ի. Բ.»:

2. Տապանագիր Տարսային իշխանի.

«Ի թվիս Զ. Լ. Ը. Այս է հանգիստ արքայաշուք կողմնակալին հզոր եւ մեծ գործակալին և քաջապահ մեծամարտին աթաբակ Տարսայինին»:

3. Տապանագիր Փախրադսիլայ իշխանի.

«Այս է յարկ տապան ի բանդ բարկութեան է եւ գերութեան հրաշագեղ մանկանն եւ քաջագոր երիդասարտին Փախրադսիլին որդոյ մեծափառ իշխանի Տարսայինին վասն որոյ աղաչեմ յիշել թվիս Զ. Խ. Ե.»:

4. Տապանագիր իշխանունի Մինայ խաթունի.

«Ի թվին Զ. Խ. Է. Թագազարմ արքայունին է Մինայ խաթունն դուստր մեծ կողմնակալին Աղուանից Ջալալին»:

5. Տապանագիր Էլիկում իշխանի.

«Թվին Զ. Խ. Թ. Զգեղեցկատիպն Էլիկում որդի մեծի Տարսայինին որ առիւծօրէն խոխտ մոնշէր ընդդէմ այլասեռ գնդին աղաչեմ յիշել յաղօթ»:

6. Տապանագիր իշխանունի Թամթայ խաթունի.

«Զաշխարհաշէն դշխոյափառ պարօն զԹամթայ խաթունն մայր Բուրթելին յիշեցեմ. թվին Զ. Կ. Ա.»:

7. Տապանագիր Սմբաթ իշխանի.

«Վարդագոյն տղային Սմբաթ որդի Բուրթելին յիշեցեմ»:

8. Տապանագիր Բուղդայ իշխանին.

«Եղբայր մեծ Բուրթելին զգեղահրաշ Բուղդային երիտասարդ հասակաւ յետ յոլով քաջ մրցմանց տիգախոցեալ զանթառամն ընկալաւ զպսակ թվին Զ. Կ. Է.»:

ANI ARAKELYAN

PETROS MADAT'YAN (ASHUGH SEYAD)
AND THE FIRST READING OF THE INSCRIPTIONS
OF NORAVANK' IN AMAGHU

Keywords: Archbishop Sargis Jalalyants', Hovhannes Babayan, K'ajberuni, the tomb of Smbat, *Chrak'agh* journal, Governor of Nakhijevan district, Yerevan Governorate, ms M3751, at'abak Tarsayich Orbelean.

Between 1852 and 1858, with a few breaks in between, Petros Madat'yan served as the head of the district of Vayots' Dzor three times. During his last visit, with the agreement of Archbishop Sargis Jalalyants', the renowned ashugh and his three associates compiled the description of the antiquities of Vayots' Dzor, including the inscriptions, in absence of the archbishop. On October 22, 1857, Petros Madat'yan sent these documents to S. Jalalyants' in Tiflis, who included the material in his book *Travel in Greater Armenia* published in 1858. Because of the pressure of official obligations, Petros Madat'yan was unable to get involved in all of the works in Vayots' Dzor. But, on September 15, 1857, the tomb of Smbat in Noravank' of Amaghu, the family mausoleum of the Orbelean princely house, was discovered under his leadership. A number of new sources – archival documents, manuscript materials, one publication, as well as the memoirs of contemporaries – prove that Petros Madat'yan and his associates were the first to discover the tomb of Smbat. Additionally, Petros Madat'yan was the first person to read the epitaphs on the tombstones. These epitaphs, however, were published in 1860 in the journal *Chrak'agh* two years later than the mentioned work of S. Jalalyants'. Compared to the ones published by S. Jalalyants', these readings are more accurate and comprehensive. Despite using Petros Madat'yan's publication, Ghevond Alishan failed to reference the source or provide the author's name. Later publications of these epitaphs did, however, incorporate some of Petros Madat'yan's readings, thanks to Alishan. However, because they were not widely distributed in scholarly circles, they failed to attract serious attention.

АНИ АРАКЕЛЯН

**ПЕТРОС МАДАТЯН (АШУХ СЕЯД) И ПЕРВОЕ
ПРОЧТЕНИЕ НАДПИСЕЙ АМАГИНСКОГО НОРАВАНКА**

Ключевые слова: *Архиепископ Саргис Джалалянци, Иованнес Бабаян, Каджберуни, гробница Смбата, журнал «Чраках», управляющий Нахичеванским уездом, Ереванская губерния, рук. М3751, атабак Тарсаич Орбелян .*

В течение 1852-1858 годов, с некоторыми перерывами, Петрос Мадатян, в качестве начальника участка, три раза побывал в Вайоц Дзоре. Во время последнего визита, по договоренности с архиепископом Саргисом Джалалянцем, известный ашух и трое его сотрудников, в отсутствие архиепископа, составили описание древностей Вайоц Дзора вместе с надписями, которое 22 октября 1857 года Петрос Мадатян отправил С. Джалалянцу в Тифлис. Последний включил его в свою книгу «Путешествие в Великую Армению», изданную в 1858 году. Хотя из-за служебной занятости Петрос Мадатян не смог участвовать во всех работах в Вайоц Дзоре, тем не менее 15-го сентября 1857 года под его руководством в Амагинском Нораванке была обнаружена гробница Смбата, родовая гробница княжеского дома Орбелянов. Новые источники – архивные документы, рукописные материалы, одна публикация, а также воспоминания современников – доказывают, что Петрос Мадатян и его сотрудники были первооткрывателями гробницы Смбата, а Петрос Мадатян первым прочел эпитафии, которые были опубликованы в 1860 году в журнале «Чраках» после упомянутой работы С. Джалалянца. Однако чтения Мадатяна более полные и точные, чем опубликованные С. Джалалянцем. Хотя Гевонд Алишан использовал эту публикацию Петроса Мадатяна, он не упомянул ни источник, ни имени автора. Благодаря Алишану некоторые чтения Петроса Мадатяна были включены в более поздние издания этих эпитафий, однако не вошли в широкий научный оборот и поэтому не удостоились должного внимания.